



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆ ՃՈՂՁՎՐԴ ԿՈՄԻՍԱՐԻԱՅ  
ՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՆԿՏՈՐ

Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

371

Ա-19

ՊԵՏԼՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

1 MAR 2010

ՀԱՅԷ ԼՈՒՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ  
Մ Ա Ս Ս Ա Յ Ա Կ Ա Ն Զ Ն Ռ Ն Ա Ր Կ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Ս Ե Կ Տ ՈՐ

371

4-19

Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՊՈՒՒՏԵԻՆԻԿԱԿԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4813

4813



26 JUL 2013

46.025

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՄՍՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿ № 1795  
ԳԼԱՎԻՍ 6711 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 1126  
ՏԻՐԱԺ 1500.



1044  
38

## ՊՈԼԻՏԵՍԻՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1

Արդեն անյերկբայելի ճշմարտութիւնն է դարձել այն, Վոր մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման հետ կապված ամենախոշոր դժվարութիւնը, ամենանեղ տեղը,— դա կուլտուրական հեղափոխութեան և դրա հետ կապված կադրերի պրոբլեմն է: Այն համաժամանակը, Վոր մեր ժողովրդական տնտեսութեան ամբողջ բարձր քանակական ցուցանիշների կողքին մենք ունենք դեռ չափազանց անբավարար լիորակական ցուցանիշներ,— դա առաջին հերթին և հիմնականում բացատրվում է բանվորութեան ու գյուղացիութեան հիմնական մասսայի կուլտուրական ցածր մակարդակով և տեխնիկական անզբաղիտութեամբ:

Այժմ այդքան սուր կերպով դրված կադրերի պրոբլեմը չի լուծվում և չի սահմանափակվում մեր ժողովրդական տնտեսութեան և կուլտուրական շինարարութեան համար անհրաժեշտ վիճին և բարձր հրամանատարական կադրով: Հասկապես սոցիալիստական վերակառուցման ներկա ետապը մեր ժողովրդական տնտեսութեան հետադա սոցիալիստական ուղիով դարդանալու նախապայմանն է դարձնում բանվորութեան և գյուղացիութեան ամենալայն խավերի դիտա-



կան-տեխնիկական մակարդակի բարձրացման խընդերիները.—այլ կերպ անհնար է պատկերացնել ամենալայն աշխատավորական մասսաների ձեռքով սոցիալիզմ կառուցելու և աշխատանքի սոցիալիստական այն մեթոդները, ինչպիսիք են սոցմրցում, հարվածայնություն, արտադրական խորհրդակցություն, բանվորական դյուտարարություն, արտադրական հիմնարկների շեֆությունը պետական ու այլ հիմնարկների վրա և այլն և այլն,—մեթոդներ, առանց վորոնց այժմ դժվար է պատկերացնել մեր յերկրի սոցիալիստական կառուցումը:

Սոցիալիստական շինարարության հազվեանակի գրավականն էլ հենց այն է, վոր նա կառուցվում է միլիոնների ձեռքով, նրանց ստեղծադործական ակտիվություն միջոցով: Բանվոր դասակարգը լիովին իշխող դասակարգ է դառնում այն դեպքում, յերբ նա վոչ միայն իր ձեռքն է վերցնում քաղաքական իշխանությունը, այլ և իրապես իր ձեռքն է առնում ամբողջ ժողովրդական տնտեսության իրական ղեկավարման ու կազմակերպման գործը, դրա հետ կապված տիրապետում է տեխնիկայի և դիտություն նորարդւյն նվաճումներին և դրանով վերջ է տալիս բուրժուական հասարակարգից ժառանգություն մնացած՝ տեխնիկական և այլ ինտելիգենցիայի մենաշնորհ գրություն:

Ահա այս խոշոր խնդիրներն են, վորոնց լուծումը պետք է տա կուլտուրական հեղափոխությունը, վորի հիմնական նպատակն է արդեն կառուցչող սոցիալիստական հասարակակարգի համար պատրաստել ու դաստիարակել նոր տիպի մարդ-քաղաքացի:

Կուլտուրական հեղափոխությունը մեր առաջ դը-

նում է վոչ միայն քանակական պահանջներ, այլև վորակական խոշոր բեկում ամբողջ ժողովրդական կրթության դործում:

Այդ բեկման հիմնական ողակը, վորից քաշելով դուրս պիտի հանենք մեր ժողովրդական կրթության և հատկապես դպրոցական շինարարության վոյշ շըթան, —պոլիտեխնիկական կրթության խնդիրն է: Դրանով պիտի բացատրել այն, վոր պոլիտեխնիզմի խընդերը դարձել է ժողովրդական կրթության վերակառուցման ամենակենտրոնական հարցը, վորն առանմիջ ուշադրություն է վոչ միայն մանկավարժական, այլ ավելի լայն աշխատավորական հասարակայնության ու մամուլի կողմից:

Պետք է վոչ միայն լուսաշխատավորների, այլև աշխատավորության ամենալայն մասսաների ու կազմակերպությունների ուշադրությունը, յեռանդն ու միջոցները մորիլիդացիայի յենթարկել այս խնդրի լուսաբանման, մասսայականացման գործնական կիրառման շուրջը: 1930-31 ուսումնական տարին պետք է նախապատրաստել ու սկսել մասսայական դպրոցի պոլիտեխնիզացիայի նշանաբանի տակ:

Բայց ի՞նչ է պոլիտեխնիզմը և վորտեղից է նա ծագել:

2

Յեթե վերևում ասվեց, վոր սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանն առանձին սրություն է դնում է պոլիտեխնիկական կրթության խնդրը, — դա դեռ չի նշանակում, վոր այդ քաղաքիստը և դրա իրականացման անհրաժեշտությունը միայն նոր է առաջացել:



Պոլիտեխնիկական կրթութեան զարգացման ու նրա հիմնական սկզբունքների ձեւակերպման հեղինակները հանդիսանում են Մարքս—Ենգելսը: Այդ զարգացմանը հանդիսանում է գիտական սոցիալիզմի որդանական մի մասը, վերը հիմնականում նշում է սոցիալիստական հասարակարգի քաղաքացիներ դաստիարակելու նախապայմաններն ու միջոցները:

Վորպեսզի սկզբից և յետո՞ւ հարեւանցի զարգացար կազմենք՝ թե ինչ է հասկանում Մարքսը պոլիտեխնիկական կրթութեան ասելով, բերենք մի ցիտատ 1-ին ինտերնացիոնալի առաջին կոնգրեսի համար Մարքսի կազմած բանաձեւից. «կրթութեան տակ մենք յերեք բան ենք հասկանում. 1. Մտավոր կրթութեան, 2. Ֆիզիկական կրթութեան, այնպիսին, վորպիսին տալիս են մարմնամարզական դպրոցներն ու զինվորական վարժութեանները, 3. Պոլիտեխնիկական կրթութեան, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին և միևնույն ժամանակ յերեխային ու դեռահասին տալիս է բոլոր արտադրութեանների տարրական գործիքներից ոգտվելու գործնական ունակութեանները»:

Առանց առայժմ մանրամասնութեանների մեջ մտնելու նշենք միայն, վոր ըստ Մարքսի՝ կատարյալ և լրիվ կրթութեանը այն է, յերբ յերեխան ստանում է և մտավոր և ֆիզիկական կրթութեան և բացի այդ տեսականորեն ու գործնականորեն (արտադրողական աշխատանքին անմիջապես մասնակցելով) ծանոթանում է արտադրական պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին: Հենց այսպիսի միայն բավական է յեղրակացնելու, վոր այս սկզբունքով դաստիարակվող քաղաքացին նման զասակարգային, հասարակաբարձրական հասարակարգի քաղաքացուն, վորը դաստիարակվում է և պատրաստվում է կամ մտավոր (դեկավար) աշխատանքի կամ ֆիզիկական (անմիջական արտադրողական) աշխատանքի համար:

Մարքսը հավատարիմ իմ ուսմունքի դիպեկտիկական որյեկտիվիզմի սկզբունքներին այս կամ այն տվյալ դեպքում պոլիտեխնիկական դաստիարակութեան զարգացմանը «չի ստեղծում իր գլխից», այլ դրա առաջացման և իրականացման նախապայմաններն արդեն նշմարում է հենց կապիտալիստական հասարակարգի զարգացման որյեկտիվ ուղիներից:

Ըստ Մարքս—Ենգելսի պոլիտեխնիկական կրթութեան իրականացման յերկու կարգի նախապայմաններ կան.—1. Տեխնիկական—արտադրական և 2. Դասակարգային—սոցիալական:

3

### ՊՈԼԻՏԵՏԵՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՏԵՆԻԿԱԿԱՆ—ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բարձրագույնի պոլիտեխնիկական պատրաստութեան ունեցող բանվոր պահանջում է ամենից, առաջ ժամանակակից մեքենայացրած արդյունարբերութեանը, վորի բնույթը, —հակառակ մինչ այդ գոյութեան ունեցող արտադրական ձեւերի կոնսերվատիվ բնույթի, —հեղափոխական է, դինամիկ, փոփոխուն: «Մեքենաների, քիմիական պրոցեսների ու այլ մեթոդների ճորհիվ նա (արդյունարբերութեանը) անընդհատ առաջացնում է հեղաշրջումներ արտադրութեան տեխնիկական բաղիստում, իսկ դրա հետ միասին և բանվոր-



հերի Ֆունկցիաների միջեւ աշխատանքի պրոցեսի հա-  
տարակական կապակցությունների դժուր: Այսպիսով  
նա նույնպես անընդհատ հեղափոխականացնում է աշ-  
խատանքի բաժանումը հասարակութայն ներսը և մըշ-  
տապես հսկայական կապիտալներ և ահազին թվով  
բանվորներ և շարտում արտադրութայն մի ճյուղից  
մյուսը:

«Ուստի և խոշոր արդյունաբերութայն բնութիւնը  
պայմանավորում է աշխատանքի փոփոխում, Ֆունկ-  
ցիաների շարժում, բանվորների բազմակողմանի շար-  
ժունություն»:

Այսպիսով բազմակողմանի պատրաստություն ու-  
նեցող բանվորի պահանջն առաջին հերթին պայմանա-  
վորվում է ժամանակակից արդյունաբերութայն ըստ  
եյության հեղափոխական տեխնիկական բաղալով,  
տեխնիկայի անընդհատ նվաճումներով և հին տեխնի-  
կական բաղալի շարունակական փոփոխմամբ, մի այն-  
պիսի վիճակով, յերբ յերբեմն դեռ նոր են սկսում  
կիրառել տեխնիկական նորամուծություն, յերբ մի  
այլ՝ ավելի նոր գյուտի շնորհիվ նա արդեն հնացած  
է լինում: Այս բոլորի հետևանքով փոխվում է վոչ մի-  
այն գոյություն ունեցող արտադրութայն ճյուղերի  
տեխնիկական բազան, այլ առաջանում են մինչ այդ  
գոյություն չունեցող արտադրութայն նորանոր ճյու-  
ղեր: Իսկ այս բոլորը պահանջում է բանվորի այնպի-  
սի տեմպ, վորը կարողանա հեշտությամբ վերադինվել  
արտադրութայն նոր և նոր ճյուղերում աշխատելու  
համար:

Խոշոր մեքենայացրած արդյունաբերությունը վոչ  
միայն անհրաժեշտ է դարձնում բազմակողմանի պատ-

րաստված բանվորի տեմպը, այլ և դրա պատրաստման  
համար օտեղծում է անհրաժեշտ տեխնիկական նա-  
խադրյալներ: Համեմատելով ժանուֆակտուրային  
արտադրությունը մեքենայացրած արդյունաբերու-  
թյան հետ՝ Մարքսը նշում է այն հիմնական տարբե-  
րությունը, վորը կա աշխատանքի բաժանման նկատ-  
մամբ այդ յերկուսի միջեւ—յեթե ժանուֆակտուրա-  
յին արտադրության մեջ աշխատանքի բաժանումը կա-  
տարվում է մեքենաների, հատկապես նրանց բանվո-  
րական մասերի (рабочая часть) միջեւ: Առաջին  
դեպքում բանվորն ամբողջում է աշխատանքի առար-  
կայի մշակման պրոցեսի մի վորոշակի մասին և կա-  
տարում է միմիայն ամբողջ արտադրութայն պրոցեսի  
միայն այդ մասը. մեքենայացրած արդյունաբերու-  
թյան մեջ հիմնականում նյութի անմիջական մշակու-  
մը կատարում է մեքենայի բանվորական մասը, իսկ  
բանվորին դիտարկում մնում է սպասարկել, հսկել  
ուղեկավարել մեքենան: Անմիջապես կապված չլինե-  
լով արդյունաբերութայն պրոցեսին և դրա հետ կապ-  
ված շարժումներին հնարավորություն ունի անցնելու  
մի մեքենայից մյուսին: Իսկ յեթե ուշադրություն  
դարձնենք մեքենաների վրա, մենք կտեսնենք, վոր  
նրանք բոլորն ել կառուցված են նույն սկզբունքով (3  
հիմնական մասից՝ 1. ուժային մաս, 2. փոխադրող-  
передаточная և 3. բանվորական մաս). անկախ նրա-  
նից, թե նա արդյունաբերութայն վոր ճյուղում է կի-  
րառվում. որինակ դիպել մեքենային ծանոթը կարող  
է այդ մեքենան աշխատեցնել և շոգենավի, տրակտորի  
և ավտոմոբիլի վրա և այլն: Այս պայմաններում բա-  
վական է, վոր բանվորը ծանոթ լինի մեքենայի կա-



առուցվածքի ընդհանուր սկզբունքներին, վորպեսդի նա կարողանա աշխատել արդյունաբերության ցանկացած ճյուղում:

Նույն ձևով հնարավոր է մի շարք սահմանափակ թվով, հիմնական ձևերի վերլուծել այն շարժումները, վորոնք անհրաժեշտ են մեքենայի վրա աշխատելու համար: «Տեխնոլոգիան նույն ձևով դտել է շարժումների այն սակավաթիվ հիմնական խմբերը, վորոնք ախուսափելի ձևով վեր են ածվում մարդու վողջ գործունեությունից շարժումների, չնայած նրա գործածած գործիքների ամբողջ բաղմադասություն, — ճիշտ այնպես, ինչպես մեխանիկան, — չնայած մեքենայի շահազանց բարդություն, — դտել է, վոր դրանք բոլորը (մեքենաները) իրենցից ներկայացնում են պարզապես գործիքների կրկնություն» (Մարքս): Մեքենայադրած արտադրությունը վերացնում է բանվորների իմբերը գանաղան մեքենաներին ամրացնելու անհրաժեշտությունը: Քանի վոր գործարանի ամբողջ շարժումը ծաղում է վոչ թե բանվորից, այլ մեքենայից, — առանց աշխատանքի սրտցեսն ընդհատելու հնարավոր է մարդկանց մշտական փոփոխում... (Մարքս):

Յեթե արհեստավորական-տնայնագործական և մասամբ մանուֆակտուրային արտադրությունից ժամանակ արտադրողի աշխատանքի արտադրողականությունը և նրա արտադրանքի վորակը մեծապես ու անմիջապես կախված էր արտադրողի անհատական հատկություններից — նրա շնորհքից, ճարպիկությունից և այլն, յեթե այդտեղ արտադրողի ստեղծագործական կարողություններն անմիջապես անդրադառնում էին արտադրանքի վորակի, գեղարվեստական ձևավոր-

ման փրա և այլն, յեթե այդտեղ ամբողջ արտադրությունը և նրա ուսումնասիրությունը հիմնված էր լոկ փորձի (եմպիրիայի) վրա, վորը բոլորովին գիտականորեն հիմնավորված չէր, — մեքենայացրած արդյունաբերության մեջ բոլոր վերոհիշյալ պայմանները հիմնովին ու տրամադճորեն փոխվում են. — արտադրությունը, նրա բոլոր ելեմենտներն ու մոմենտները հիմնվում են սեխնիկայի վրա, որյեկտիվ գիտական բաղիտի վրա, բանվորի անհատական յուրահասակությունները դադարում են անմիջապես աղգելու արտադրանքի վորակի վրա, նրա ստեղծագործական կարողությունը հիմնականում կարող է ողտագործվել արտադրությունից սեխնիկական սոցիալիզացիայի ասպարիզում:

Յկզլակացություն. 1. — Մեքենայացրած արդյունաբերությունից հեղափոխական տեխնիկական բազան անհրաժեշտ է դարձնում բաղմակողմանի-պոլիտեխնիկական պատրաստություն ունեցող բանւորի սեմպը. 2. նույն այդ մեքենայացրած արդյունաբերությունն աշխատանքի յուրահաստուկ բաժանման միջոցով (աշխատանքի բաժանում վոչ թե անմիջական բանվորների, այլ մեքենաների միջեմ) նախապայմանն էր րտաեղծում այդպիսի եղիվ բանվորի պատրաստման համար: 3. Գիտություն և տեխնիկայի վրա հեմված մեքենայացրած արդյունաբերություն մեջ աշխատելու համար անհրաժեշտ է դառնում արտադրություն և տեխնիկայի ու գիտություն որդանահան շաղկապը. 4. Տեխնիկայի դարգացման հետ հարթաց բանվորից ալիւի ու ալիւի յե սկսվում պահանաջվել վոչ այնքան Ֆիզիկական աշխատանքի վարժություն, ուսակություն ու ճկունություն, վորչափ տեխնիկական-



գիտական պատրաստութիւն մեքենան ղեկավարելու համար :

4 :

ՊՈԼԻՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ—  
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆԱԽՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յերբ վերելում մենք խոսում եյինք մեքենայացրած արդյունաբերութեան հետ կապված բանվորի բազմակողմանի պոլիտեխնիկական պատրաստութեան անհրաժեշտութեան ու հնարավորութեան մասին, — դիտամբ մի կողմ եյինք թողել այն հասարակական ու արտադրական հարաբերութիւնները, վորոնց շրջանակում առաջացել ու զարգացել են արդյունաբերական հեղաշրջումը և իբրև դրա հետեւանք բարձր տեխնիկայի վրա հիմնված արդյունաբերական կապիտալը : Մենք մինչև այժմ վերացականորեն խոսում եյինք մեքենայացրած արդյունաբերութեան և դրա համապատասխան բանվորի տիպի մասին . այնինչ պետք է խոսել կապիտալիստական հասարակարգի պայմաններում գոյութիւն ունեցող արդյունաբերութեան մասին : Իսկ ինդիւրն այսպես գնելով՝ բոլորովին փոխվում է և բանվոր արտադրողի և ղեկի արտադրութիւնն ունեցած նրա ղեկի ու ղեկքի ինդիւրը :

Այստեղ կրկին հանդես է գալիս մեկն այն բազմաթիւ հակասութիւններից, վորոնք կապիտալիստական հասարակարգի շրջանակում գոյութիւն ունեն արտադրողական ուժերի զարգացման ու արտադրական հարաբերութիւնների միջեւ : Յեթե արտադրողական ուժերի, հատկապես տեխնիկայի զարգացումն առաջադրում է բազմակողմանի զարգացած բանվորի

պահանջ, — կապիտալիստական արտադրական հարաբերութիւնները, արտադրական միջոցների մասնավոր սեփականութիւնն այդ բանը անհնարին են դարձնում : Յեթե արտադրութեան անմիջական շահերը հենց կապիտալիզմի համար «կյանքի ու մահի ինդիւր են դառնում աշխատանքի փոփոխման, հետեւապես և բանվորներին մաքսիմալ բազմակողմանի անհրաժեշտութիւնը» — դասակարգային պայքարի նրան հրաժեշտութիւնը — դասակարգային պայքարի նրան կատառուժները կապիտալիստի համար անընդունելի յին դարձնում բազմակողմանի, մտալորապես զարգացած ու գիտակից մասսայական բանվորութեան գոյութիւնը :

Յեթե «խոշոր արտադրութեան բնութիւնը պայմանավորում է բանվորների բազմակողմանի շարժունութիւնը» . . . մյուս կողմից նա (խոշոր արտադրութիւնը) իր կապիտալիստական ձեւով վերարտադրում է աշխատանքի հին բաժանումն՝ իր քարացած մասնակալութիւններով :

Կապիտալիստը բազմաթիւ պատճառներով և հակադրված է, և հնարավորութիւն ունի պահպանելու մանուֆակտուրային արտադրութիւնից, ժառանգութիւն ստացած աշխատանքի բաժանումը և դրա հետ կապված բանվորի միակողմանի զարգացումն ու ֆիզիկական ու մտալոր հետամնացութիւնն ու այլասեղանակումը, վորի դեմ կռիւլու յեր կռված խոշոր մեքենայացրած արդյունաբերութիւնը : Այս բանում նրան մեծապես ոգնում է դործագորիկների հսկա բարան մեծապես ոգնում է դործագորիկներին բազմակողմանի (ընչու իդուր տեղը բանվորներին բազմակողմանի պատրաստութիւն տալ, յերբ զանազան աշխատանքների համար նրա տրամադրութեան տակ է գործ



ծագութեանը (հակա բանակը), և կանանց ու անչափահասների չարազանց ետան աշխատանքը, վորի հետեւանքով նա կարիք չի դրում առանձին յեռանդով մեքենայացնելու արտադրութեան բոլոր ճյուղերն ու սրտցեաները (այստեղից ել սակավաթիվ վորակյալ բանվորների կողքին կան բաղձաքանակ անխորակ բանվորներ, վորոնք հանդիսանում են վոչ թե մեքենայի ղեկավարը, այլ նրա մի մասնիկը) :

Մարքոսը և Ենգելսը մանրամասն կանգ են առնում այն կործանարար ազդեցութեան վրա, վորն առաջանում է աշխատանքի գոյութեան ունեցող բաժանումից : «Արդեն աշխատանքի առաջին մեծ բաժանումը՝ քաղաքի անջատումը, գյուղից—գյուղական ազգարւնակութեանը դատապարտել է յերկարատեւ, հազարամյա բթացման, իսկ քաղաքի բնակիչներին՝ յուրաքանչյուրին առանձին ստրկացրել է իր դետալ (մասնակի) աշխատանքով : Նա (աշխատանքի բաժանումը) վոչնչացրել է առաջինի (գյուղական ազգարնակութեան) հոգեկան դարգացումը և յերկրորդների Ֆիլիպիկան դարգացումը... : «Աշխատանքի բաժանման հետ միասին մասերի յե բաժանվել և ինքը մարդը : Նրա մի վորեւ գործունեութեան դարգացման նպատակով զոհարեւել են նրա բոլոր այլ Ֆիլիպիկան և հոգեկան կարողութեանները» (Ենգելս) : «Նա (մանուֆակտուրան) բանվորին անդամալուծ է դարձնում և այլանդակում, դուռ ջերմոցային ճանապարհով նրա մեջ դարգացնելով մասնակի ունակութեաններ և ճնշելով արտադրողական հակումների ու ընդունակութեանների մի ամբողջ աշխարհ... նույնիսկ անհատը բաժանվում, մանրացվում է՝ վեր ամվելով մի ավտոմա-

տիկ անիվի, վորը կտարում է մի մասնակի աշխատանք... խոշոր ինդուստրիայի մեքենայացումը բանվորին մեքենայից դարձնում է մեքենայի մի մասնիկը» (Մարքոս) : «Յեւ վոչ միայն բանվորները, այլ ուղղակի կամ անուղղակի ձեւով նրանց շահագործող սակարգներն աշխատանքի բաժանման շնորհիվ ստրկացած են իրենց գործունեութեան գործիքների կողմից—անհոգի բուրժուան իր սեփական կապիտալով և շահույթի իր տենչով, իրավաբանը՝ իր քարացած իրավական հայացքներով, վորոնք իշխում են նրա վրա, վորպէս մի ինքնուրույն ուժ» (Ենգելս) : «Ինչպէս բռնութեան մեջ գլուխը և ձեռքը պատկանում են միևնույն որգանիղմին, այդպէս ել աշխատանքի սրտցեսում միանում են և գլխի և ձեռքի աշխատանքները : Հետագայում նրանք անջատվում են և հասնում թշնամական հակադրութեան» \* (Մարքոս) :

\* Պետք է ասել, վոր արտադրութեան մեքենայացման, բիմիացման ու ելեկտրականացման հետագա զարգացումը վերջ է տալիս միջին վորակի արհեստավորական բնույթի պատրաստութեան ունեցող բանվորի գոյութեան և այժմ կապիտալիստական յերկրներուն հետոգ զործարանները) և բ) րակավաթիվ բարձրակի, տխնիկական լայն և խոր պատրաստութեան ունեցող բանվոր-տեխնիկներ, վորոնք պետք է կարողանան հասկանալ ու ղեկավարել չափանց բարդացած մեքենաներ : Բանվորի այս յերկրորդ տիպն է, վորը կապիտալիստների առջև յուրահատուկ ձեռք չունի և յուրահատուկ (դուռ տխնիկական յնույթի) պոլիտեխնիզմի հարցը և այնտեղ արդեն ստեղծվում են այդպիսի գործներ, վորտեղ տեխնիկական-պոլիտեխնիկական կրթութեան հետ բանվորներին հրամցնում են խոշոր չափի բուրժուական դադափարախոսութեան հրամցնում են խոշոր չափի բուրժուական այդպիսի բանվորի «բազմակողմանի զարգացումը» :



Յեզրակայացութիւն. — Դասակարգային հասարակութեան մեջ, հատկապէս բուրժուական հասարակութեան մեջ (չնայած մեքենայացրած արտադրութեան հակառակ տենդենցներին) աշխատանքի բաժանման շնորհիվ ստեղծվել է անջրպետ գյուղի և քաղաքի, արտադրողական և ղեկավարման կամ այլ կերպ ստանալու գլխի և ձեռքի, մտավոր և ֆիզիքական աշխատանքի միջևի: Այդ անջրպետն իր բոլոր հետևանքներով արդյունք է դասակարգային հասարակութեան կառուցվածքի, հանդիսանում է և արտադրական ուժերի և հասարակութեան բոլոր անդամների բազմակողմանի զարգացման խոչընդոտ, վորը վերացնել կարելի չէ դասակարգային հասարակութեան վերացման հետ միասին:

5

ԱՊԱԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ,  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՅԵՎ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յեթե նախորդ գլխում հիշատակված աշխատանքի բաժանման հետ կապված բացասական յերեզույթներն ու հակասութիւններն ի վիճակի չի լուծել կապիտալիստական, հասարակարգը, սոցիալիստական հասարակութիւնը վերացնելով դասակարգերը և գոյութիւն ունեցող աշխատանքի բաժանումը, — անհրաժեշտորեն պետք է և կարող է լուծել և այդ խնդիրը:

Պատակարգերի գոյութիւնն արդյունք է աշխատանքի բաժանման, իսկ աշխատանքի նախկին ձեւի բաժանումն ամբողջովին կանհետանա, քանի վոր արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրութիւնը մատնանչված բարձրութիւնը հասցնելու համար բավական չեն միայն մեքենայական և քիմիական

1044  
39

ոճանդակ միջոցներ: Պետք է համապատասխան չտնօրէց զարգացնել և այդ միջոցները կիրառող մարդկանց ընդունակութիւնները»: «Արդէն ժամանակակից արդյունաբերութիւնն ալելի ու ալելի քիչ ի վիճակի դիւրնաբերութիւնն ալելի (մասնակի աշխատանք կատարելու ուղիներ այգլիսի (մասնակի աշխատանք կատարող) մարդկանցից: Յեվս առավել այն արդյունաբերութիւնը, վորն ամբողջ հասարակութեան կողմից հասարակութեան շահերի համար ղեկավարվում է, — կարիք է գգում բազմակողմանի զարգացած ընդունակութիւնները տեղ մարդկանց, մարդիկ, վորոնք հասկանում են արտադրութեան վորը սխտեմը: Աշխատանքի այն բաժանումը, — վորը հենց այժմ արդեն խախտած է մեքենայի շնորհիվ և վորը մեկին դարձնում է գյուղացի, էյուսին կոչակար, յերրորդին՝ դործարանային բանժոր, չորրորդին՝ բորսային սպեկուլյանտ, — ամբողջովին կանհետանա... Այսպիսով, էոմոնիստական սկզբունքներով կազմակերպված հասարակութիւնը մի կողմից անհամատեղելի չէ դասակարգերի հետագա գոյութեան հետ, իսկ մյուս կողմից հենց այդ հասարակութեան ստեղծումը հնարավորութիւն է տալիս վերացնելու դասակարգային տարբերութիւնները: Այստեղից հետեւում է, վոր քաղաքի և գյուղի միջի հակասութիւնը նույնպէս կվերանա: Միևեւոյն մարդիկ կզբաղվեն և յերկրագործութեամբ և արդյունաբերական աշխատանքով, փոխանակ դա տարբեր դասակարգերի թողնելու» (Ենդելս «Կոմունիզմի սկզբունքները»): «Արտադրութեան համաձայնացումը կապահովի հասարակութեան բոլոր անդամների վոր միայն միանգամայն բավարար ու շարունակ բարեկամիւղ նյութական գոյութիւնը, այլև



կապահովի նույնպես նրանց Ֆիլիկիական և հողեկան կարողութիւնները ազատ զարգացումն ու հայտնաբերումը» (Յնդեւս) :

Այսպիսով արտադասակարգային հասարակութեան կառուցվածքն արդեն ստեղծում է անհրաժեշտ որչեւտիվ նախապայմաններ բաղձակողմանի զարգացում ունեցող քաղաքացիների պատրաստման համար : Դատարարակութեանը մնում է իր կողմից ոժանդակել ու ոգտագործել այդ որչեւտիվ հնարավորութիւնները և դրանք իրականութեան դարձնելու : Կոմունիստական հասարակութեան մեջ «դատարարակութեանը յերտասարդ մարդկանց հնարավորութեան կտա արագ կերպով ծանոթանալու արտադրութեան վողջ սիտեմի հետ, նրանց հնարավորութեան կտա հերթով անցնելու արտադրութեան մի ճիւղից մյուսը՝ նայած հասարակութեան կարիքներին և իրենց սեռական հակումներին : Այսպիսով դատարարակութեանը կազատագրի նրանց այն միակողմանիութեանից, վորն անխուսափելի արդեւնք է ժամանակակից աշխատանքի բաժանման» (Յնդեւս) :

Մարքսը-Ենդեւսը նման դատարարակութեան պատկերը կրկին վոչ թե հնարում են իրենց գլխից, այլ դրասագմերն աշխատում են նշմարել, արդեն կապիտալիստական հասարակութեան մեջ : Այսպիսի դատարարակութեան հիմքը, — դա՛ յերեխաների մասնակցութեանն է գործարանային արտադրութեան, չնայած նրան, վոր դա կապիտալիստական կարգերում հաճախ յերեխաների շահագործման այլանդակ ձև է ըստանում : «Ժամանակակից արդեւնարեութեան ձգտումը՝ յերկու սեռի յերեխաներին և դեռահասաներին հա-

սարակական արտադրութեան ներգրավելը, — մենք համարում ենք պրոգրեսիվ, բարերար և ուղիղ . վորչափ էլ զղվելի յեն այն միջոցներն ու ձևերը, վորոնցով այդ ձգտումն իրականացվում է կապիտալի իշխանութեան որոք :

«Հասարակութեան ռացիոնալ կազմակերպութեան պայմաններում առանց բացառութեան՝ բոլոր յայտնաբերը 9 տարեկանից սկսած՝ պետք է դառնան արտադրող աշխատողներ . նմանապես և չափահասներից վոչ վոք չի կարող բացառութեան կազմել ընդհանուր որենքից՝ աշխատել, վորպեսզի ուսելու իրավունք ունենալ և աշխատել վոչ միայն ուղեղով, այլև ձեռքերով» : (1-ին Ինտերնացիոնալի Ժնեվյան կոնգրեսի բանաձևիլը) :

Սակայն, յերեխաների աշխատանքը գործարանում հատկապես պրոգրեսիվ է դառնում այն դեպքում, յերբ մի կողմից վերջ է տրվում յերեխաների վերելում հիշատակված զղվելի շահագործման, մյուս կողմից՝ յերբ այդ աշխատանքը կապվում է յերեխաների ուսուցման հետ : «Յեղնելով այդ տեսակետից մենք ասում ենք, վոր վոչ ծնողներին և վոչ էլ ձեռնարկատերերին հասարակութեանը իրավունք չպիտի տա ոգտագործելու յերեխաների ու անչափահասների աշխատանքն այլ կերպ, քան պայմանով, վոր նրանց արտադրողական աշխատանքը կապվի կրթութեան հետ» (նույն բանաձևիլից) :

Այդ տեսակետից Մարքսը վողջունում է անդլիական այն գործարանային որենքը, վորի համաձայն ծրնողներն իրավունք չունեն իրենց յերեխաներին գործարան աշխատանքի ուղարկելու, յեթե միաժամանակ չեն ապահովում նրանց տարրական կրթութեանը :



«Վորձան և ընդհանուր առմամբ վողորմելի յին դորձարանային որենքի վորոշումները դաստիարակութեան մասին, նրանք սարբական ուսումը հայտարարել են աշխատանքի պարտադիր պայման: Դրանց հաջողութունն առաջին անգամ ապացուցեց, վոր հնարավոր և ուսումն և մարմնամարդութեանը միացնել Ֆիզիկական աշխատանքի հետ, սովորաբար և Ֆիզիկական աշխատանքը՝ ուսման և մարմնամարդութեան հետ»:  
(Մարքս):

Այստեղից ել բղխում է պոլիտեխնիկական կրթության այն դադափարը, վոր Մարքսը ձևակերպել է 1-ին ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսի բանաձևվի մեջ. «Կրթութեան տակ մենք յերեք բան ենք հասկանում. 1. մտավոր կրթութեան, 2. Ֆիզիկական կրթութեան, այնպիսին, վորպիսին տալիս են մարմնամարդական դպրոցներն ու Ֆիզիկական վարժութեանները, 3. պոլիտեխնիկական կրթութեան, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր զիտակամ սկզբունքներին, միևնույն ժամանակ յերեխային ու դեռահասին տալիս է բոլոր արտադրութեանների տարրական դործիքներից ողտովելու դործնական ունակութեանները...»

Վարձատրվող արտադրողական աշխատանքի, հոգեկան կրթութեան, Ֆիզիկական վարժութեանների ու պոլիտեխնիկական դաստիարակութեան միացումը բանվոր դասակարգին անչափ կբարձրացնի բարձր և միջին դասակարգերից»:  
(Մարքս):

Յեղբակացուք յուն. — Միայն կոմունիստական հասարակութեան մեջ դասակարգերի վերացմամբ վերանում են և դոյութեան ունեցող աշխատանքի բու-

ժանման աշխատողի ձեռքերը, վերանում են հատկապես մեկ կողմից դոյուղի և քաղաքի միջև, մյուս կողմից՝ մտավոր և Ֆիզիկական աշխատանքի միջև դոյութեան ունեցող անջրպետն ու հակասութեանները և առաջին անգամ իրական ու լիակապով հնարավորութեան է ստեղծվում մարդկանց բազմակողմանի զարգացման համար, հենց այդպիսի մարդիկ դաստիարակելու համար է կոչված պոլիտեխնիկական կրթութեանը, վորի զարգացման սաղմերը կան արդեն և բուրժուական հասարակարգում, բայց վորը ծավալվել կարող է միայն այդ հասարակութեան վերացմամբ:

Պոլիտեխնիկական կրթութեան ելութեանը, — դա մտավոր և Ֆիզիկական աշխատանքի որդանական կապն է, վորն իրականացվում է մտավոր կրթութեանն արտադրողական աշխատանքի հետ միացնելով. «Ձի կարելի պատկերացնել ապագա հասարակութեան լիցեալը, առանց յերիտասարդ սերնդի ուսուցումն արտադրողական աշխատանքի միացնելու. վոչ ուսուցումն ու կրթութեանն առանց արտադրողական աշխատանքի, վոչ արտադրողական աշխատանքն առանց դուրահետ ուսուցման ու կրթութեան չեն կարող զբրվել այն բարձրութեան վրա, վորը պահանջվում է ժամանակակից տեխնիկայի մակարդակով և դիտութեան վիճակով» (Լենին):

6

ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒԲԱՆ ՅԵՎ  
ՊՈՒԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հաղթած պոլիտարիտաը, վորի հիմնական խնդիրն է իրականացնել դիտական սոցիալիզմի հիմնա-



գիրքների պատգամները, — կառուցել և սոցիալիստական հասարակարգը իր պայքարի ու շինարարութեան զրոյակի վրա դրել և և պոլիտեխնիկական կրթութեան լոգոնդը, վորն իր արտահայտութեանն և դտել Համ. Կ (բ) Կ ծրագրի մեջ հետեւյալ ձեւով. — «Մեկկացնել ճրի և պարտադիր ընդհանուր և պոլիտեխնիկական կրթութեան, (վորը տեսականորեն և դործնականորեն ծանոթացնում է արտադրութեան բոլոր զլիսավոր ճյուղերի հետ) մինչեւ 17 տարեկան յերկու սեռի յերեխաների համար»:

Պոլիտեխնիկական կրթութեան պրոբլեմը յեղել և այն հիմնական խնդիրներից, վորը տեսականորեն ու դործնականորեն խոշոր չափով զբաղեցրել է խորհրդային մանկավարժական միտքը. թեպետ դրա կենսադործման աստղերը մենք չառ չնչին նվաճումներ կարող ենք մատնանշել:

Բաղմաթիւ պատճառներ (առաջին հերթին յերկրի տնտեսական փլուզումը, նյութական դժվարութեանները և համապատասխան ուսուցչական կազմի բացակայութեանը) մինչև վերջերս Սորհրդային իշխանութեանը հնարավորութեան չեն տւել մեր մասսայական դպրոցը վոչ թե պոլիտեխնիկական, այլ թեկուզ լոկ աշխատանքային դարձնելու, իսկ հատկապես պոլիտեխնիկական դպրոցի կառուցման ամենահիմնական արդեւրը յերկար ժամանակ յեղել և խոշոր արդյունաբերութեան քայքայումը և թույլ դարդացումը: Ինչպէս և դյուրամտեսական արտադրութեան պրիմիտիւ ձեւերն ու վեքենայացման և ինդուստրացման չափազանց թույլ ցուցանիչները:

Այժմ, յերբ մենք վոչ միայն վերականգնել, այլև

չտեսնված թափով սոցիալիստական հիմունքներով վերակառուցում ենք մեր վողջ ժողովրդական տնտեսութեանը, յերբ խնդիր է դրված հասնել ու անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին, մեր մասսայական դպրոցի պոլիտեխնիկացիայի խնդիրն ընդհանուր տեսական խնդիրներից դառնում է հրատապ որվա պահանջ:

7

### ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԹԵՐ ԸՄԲԸՈՒՆՈՒՄՆԵՐԸ

Զնայած Մարքս-Ենգելսի կողմից հիմնականում արդեն ձևակերպված պոլիտեխնիկական կրթութեան սկզբունքներին. — խորհրդային մանկավարժների մեջ գոյութեան ունի այդ գաղափարի տարբեր մեկնաբանում և ըմբռնում: Այս խնդրի ճիշտ լուսարանումն ունի վոչ միայն գուտ տեսական, այլև դերադանցորեն դործնական նշանակութեան, — յերբ դրված է մասսայական դպրոցի պոլիտեխնիկացիայի խնդիրը, պետք է ունենալ ճիշտ տնտեսական դիրքավորում՝ պրակտիկան անխալ կերպով կենսադործելու համար:

Առաջին սխալ ըմբռնումը, վորը փաստորեն փորձում է մեր դպրոցը վերադարձնել սխոլաստիկ-ուսուցողական դպրոցի դիրքը, դա հանրակրթական և պոլիտեխնիկական դպրոցի գաղափարների նույնացումն է. ըստ այս տեսակետի, դպրոցը պոլիտեխնիկական կոչվելու համար բավական է միայն, վոր նա մասնագիտական կրթութեան չտա, այլ հանրակրթական: Պոլիտեխնիկական կրթութեան էյութեանը, արտաբերողական աշխատանքի մասնակցութեանը և դրա որակական կապը մասավոր կրթութեան հետ, այս



տեղ քուրդովին աչքաթող ե արվում. այդ տեսակետի կողմնակիցները լավագույն դեպքում բավականանում են միայն «մարդկանց աշխատանքային գործունեյությունն ուսումնասիրելով»—գրքի կամ լավագույն դեպքում հրահուրտիայի միջոցով: Պետք ե ասել, վոք Պետգիտխորհի ծրագրերի մինչև վ-այժմյան բոլոր հրատարակությունները և խմբագրությունները, — ի բացառյալ վերջին 1930 թ. վերակազմած ծրագիրը, — չնայած ծրագրի հեղինակների նախագրուշայման, թե աշխատանքային գործունեյության ուսումնասիրություն ասելով չպիտի հասկանալ միայն սլասիվ ուսումնասիրությունը, այլև ակտիվ մասնակցություն, — հիմնականում մեր դպրոցը (հատկապես քաղաքի մասսայական դպրոցը) տարել են ուսուցողական ուղիով:

Այս ուղղության ներկայացուցիչները եյին ի միջի այլոց Խ. Ռուսաստանի Լուսժողկոմատի հին դեկավարության մի շարք պատասխանատու աշխատակիցներ: Այդ տեսակետի գործնական արտահայտությունը պիտի համարել և այն, վոք, Ռուսաստանի Լուսժողկոմատի հին դեկավարությունն ամենայն համառությամբ 2-րդ աստ. դպրոցն Եր համարում պոլիտեխնիկական դպրոցի նախատիպը և ընդգլխմանում Եր նրա 2-րդ կոնցենտրը տեխնիկումի վերածելուն: Միայն վերջին կոնստրհրդակցությունն այդ խնդիրը վերջնականապես լուծեց հոգուտ տեխնիկումի:

Վորպես այս դժի տեսական հիմնավորման մի նըմուշ յես կշերեմ «На путях к новой школе» ամսագրում գիտեղված Ողորդչիկովի հոդվածից մի

ժողքը հատված. «Յերբ մենք խոսում ենք պոլիտեխնիզմի մասին լայն իմաստով, վորպես մեր հիմնական գժի, մեղ չըջապատող իրականությունը հասկանալու և փոփոխելու գլխավոր գժի մասին, այդ դեպքում մենք պետք ե պոլիտեխնիզմը նույնացնենք ընդհանուր կրթության գաղափարի հետ»:

Մեր դպրոցի վերակառուցման ներկա ետապում այս տեսակետը պետք ե համարել ամենավտանգավոր, վորը մեր դպրոցը փորձում ե վերադարձնել մինչև պիտալիստական դպրոցին:

Յերկրորդ տեսակետը, նույնչափ անընդունելի մեզ համար, դա Աշխատանքի Կենտրոնական Ինքստիտուտի (ЦИТ) դիրեկտոր Գաստեվի տեսակետն ե: Գաստեվի տեսակետը ժողովրդական լուսավորությանը նվիրված 2-րդ խորհրդակցության ժամանակ անվանվեց վորպես «ձախ» վտանդ ժողովրդական կրթության և հատկապես դպրոցական վերակառուցման գործում. յեթե ընդունենք, վոր «աջն» ու «ձախը» վերջին հաշվով մեկ մեկու ձեռք են մեկնում և «ձախը» շատ պայմանական պիտի հասկանանք, վորպես հիմնականում մանր բուրժուապիայի աջ գործերի ձախ Փրադներով վարագրութում, նույնիսկ այս իմաստով Գաստեվի տեսակետը ձախ չի կարելի համարել, վորովհետեւ դա բացարձակ բուրժուական տեսակետ ու վերաբերմունք ե դեպի աշխատավորական մասսաների կրթությունը և հատկապես բանվորական ուժի պատրաստման գործը:

Գաստեվի վեճը Լուսժողկոմատի և ԼԿՅԵՄ-ի հետ բավականին հին ե. մի ժամանակ Գաստեվի տեսակետն եյին պաշտպանում նաև ժողովրդական տնտե-



առեթյան Գերադույն Սորհուրդը, Համամիութենական Աշխատանքի Կոմիտեի ատրը և Համարհիտորհը :

Գաստեվի տեսակետի հիմնական արատն այն է, վոր նախ նա միանգամայն աչքաթող է անում ժամանակակից արդյունաբերութեան հեղափոխական ու դիմամիկ բնույթը, վորը դեռ Մարքսն է մատնանշել և վորպես պոլիտեխնիկական կրթութեան հիմնական նախապայման է համարել: Յերկրորդ և ավելի կարեւոր հանգամանքն այն է, վոր պրոլետարական դիկտատուրայի, բանվոր դասակարգի գրեշխանութեան պայմաններում Գաստեվը բանվորի վրա նայում է ճիշտ այնպես, ինչպես մի վորեւէ կապիտալիստ, ինչպես մի ֆորդ: Բանվորը նրա համար դա միմիայն ուժի աղբյուր ու բանվորական ձեռք է և վոչ թե ամբողջ յերկրի ու ժողովրդական անտեսութեան ղեկավար դասակարգի ներկայացուցիչ:

Ըստ Գաստեվի իրեալական բանվորը նա յե, վորի շարժումները և աշխատանքն այնքան են մեքենայացրած, վոր նա ինքը հանդիսանում է, վորպես մի կատարյալ մեքենա կամ մեքենայի մասնիկ: Բանվորական ուժ պատրաստելիս մենք պետք է ղեկավարվենք միմիայն մի սկզբունքով, —ինչ շարժումներ, ունակութեաններ և վարժութեաններ պետք է զարգացնենք բանվորի մեջ, վորպետքի նա կարողանա ամենարդյունավետ, խտացրած ձեւով աշխատել տվյալ արտադրութեան տվյալ ճյուղում:

«Բանվորական ուժը (Գաստեվի համար բնորոշ է վոչ թե բանվոր, այլ բանվորական ուժ Մ. Ս.) յուրաքանչյուր անգամ պետք է պատրաստվի միանգամայն կոնկրետ ձեւակերպման հիման վրա... ժամա-

նակակից արդյունաբերութեանը մեղ հարկադրում է ճշգրիտ պատվերի և ճշգրիտ կատարման... Պատվերը ձեւակերպում է արտադրութեան վարիչը և տեխնիկա-նորմային բյուրոն»:

«Վոչ վոր արտադրութեան մեջ թույլ չի տա սեւուր, վոր յե պետք է բանվորական ուժ պատրաստեմ առհասարակ: Վոչ: Ով ավելի ճիշտ կորոշի, ով այդ տեսակետից քիչ ծախս կանի, —նա ավելի լավ էլ կլուծի այդ խնդիրը»: Գաղղյասի շուրջը քայլելու մանյուվրներ, ուշադրութեան կենտրոնացում, ուշադրութեան ձեռքերի շարժման, մարմնի դիրքի կարգավորում: Վարմունքի հենց այս տարրական հատվածներն են դառնում անկյունաքարը»:

Ընկ. Ջայցեվը Գաստեվի տեսակետը բնորոշում է հետեւյալ ձեւով. «Սյուպիսով (բանվորական ուժի) պատրաստման խնդիրն այն է, վոր կարողանանք պատրաստել այնպիսի մեխանիզմ» — վորը կարելի լիներ դնել աշխատանքի վորոշ տեղում, և նա սկսեր կատարել վորոշակի շարժումներ՝ ճշտորեն հաշված, վորոշակի արագութեամբ ու ճշգրտութեամբ»:

Գաստեվի տեսակետն արտացոլում է մեր տնտեսական որդանների բուրժուական սպեցների տեսակետը. այժմ, յերբ սուր կերպով դրված է կադրերի պըրբըմը, չափազանց իրական է այն վտանգը, վոր հատկապես մեր տնտեսական որդանները և տնտեսավարները գրավվեն եժան ու արագ կերպով բանվորական ուժ պատրաստելու Գաստեվյան սխտեմով: Սյու պատճառով Գաստեվի տեսակետն անխնայ քննադատութեան է յենթարկվել և յենթարկվում կուսակցութեան և հատկապես Կոմսոմոլի, Լուսժողովուրդի կողմից:



Բոլորովին չժխտելով այն խոշոր դործը, վոր Գաստելին իր (ՍԿԻՏ)–ի միջոցով աշխատում է վերջ տալ աշխատանքի սոսիական այն ձեւերին, վորը դանդաղ կոտուած թան, անկազմակերպութեան, թափփռելի վաճուածութեան ու անփութութեան ձեւով մենք ժառանգել ենք ցարական կիսաստիական կապիտալիզմից, գտնելով միանգամայն անհրաժեշտ՝ մեր բանվորին վարժեցնելու ռացիոնալ, զիտականորեն կազմակերպված հիմունքներով աշխատելու և իր բանվորական եներդիան մաքսիմալ արդյունավետութեամբ ռոտազործելու, մենք միաժամանակ գտնում ենք, վոր բանվորի կրթութեանը միայն դրանով սահմանափակել և միայն դրան վերածել անթույլատրելի յե :

Գաստելին՝ բանվորական ուժ պատրաստելու սկզբունքները կարելի յե և անհրաժեշտ է ընդունել վորպէս բանվորական աշխատանքի սովորեցնելու մի մեթոդ, բայց վոչ յերբեք վորպէս բանվորական կրթութեան մի սխտեմ :

Բանվորական ուժը պետք է դաստիարակել հետեւյալ ձեւով.—մի կողմից պետք է բանվորին դաստիարակել այնպէս, վոր նա կարողանա ճշտորեն կատարել այն աշխատանքը, վորը պահանջում է ձեռնարկութեան կազմակերպութեանը, մյուս կողմից՝ նրան ծանօթացնել ձեռնարկութեան և վողջ արդյունաբերութեան, վորպէսզի նա կարողանա բացի իր այդ ֆունկցիաները կատարել ավելի մեծ կազմակերպչական ֆունկցիաներ : «... Դրա համար նա (բանվորը) պետք է հասկանա վոչ միայն այն, ինչ կատարվում է նրա մեջ, և այլ նա պետք է հասկանա ամբողջ արտադրութեանը, վորպէսզի կարողանա մասնակցել մեր

վողջ արդյունաբերութեան վերակառուցման » : «... Ընկ. Գաստելի սխալն այն է, վոր նա բանվորական ուժի պատրաստման խնդրին մոտենում է վիճեռնարկի տեսակետից և վոչ թէ մեր վողջ յերկրի արդյունաբերութեան տեսակետից, վորը պետք է վերակառուցել և սոցիալիստորեն կազմակերպել » : (Կրուպսկայա) :

Գաստելի և միաժամանակ նրա տեսակետը պաշտպանող ռոզանների հիշված հայացքների հետեւյանք եր նաև այն բացասական դիրքը, վոր նրանք ունեյին (իսկ Գաստելը մինչև այժմ էլ հիմնականում այդ տեսակետին է), դեպի ֆարդործունները, վորպէս դամադաղ և քանգ ձեւով բանվորական ուժ արտադրող հիմնարկ, վորին նրանք հակադրում եյին (ՍԿԻՏ)–ը : Ինչպէս արդեն հիշատակվեց, բանվորական ուժի պատրաստման այդ բուրժուական տեսակետին ուժեղ հակահարված է տրված (թեպետ վոչ մի դեպքում այդ տեսակետը վերջնականապէս ջախջախված համարել չի կարելի և պետք է շարունակել պայքարը դրա ամեն մի ձեւի հատկապէս դործնական արտահայտութեան դեմ) և ֆարդործունն է ընդունված, վորպէս բանվորական կրթութեան և վորակցալ բանվորական կազմեր պատրաստելու հիմնական սխտեմ :

Վորոչ ընկերների կողմից հարց է տրվում.—հնարավոր է և առհասարակ անցողիկ շրջանում իրականացնել պոլիտեխնիկական կրթութեանը, թէ դա հնարավոր է միայն սոցիալիստական հասարակութեան մեջ : Յերկրով Մարքս–Ենգելսի հիմնական դրոյթից՝ պետք է ասել, վոր լրիվ պոլիտեխնիկական կրթութեան հրարավոր է ստեղծել այն ժամանակ, յերբ վոչ միայն



ինդուստրիան կհասնի մաքսիմալ դարգացման, այլ և  
յերբ դասակարգերը և ներկայիս աշխատանքի բաժա-  
նումը վերացած կլինեն—այսինքն՝ սոցիալիստական  
հասարակութեան մեջ: Բայց սա վոչ մի դեպքում՝ դեռ  
չի նշանակում, վոր մենք ձեռքներս կրճքներըս ծալած  
պետք է նստենք և սպասենք մինչև մեր վողջ յերկիրն  
ամբողջովին ինդուստրացման յենթարկվի, կառուցվի  
յրիվ սոցիալիստական հասարակութուն և ապա նոր  
միայն անցնենք պոլիտեխնիկական դպրոցի կառուց-  
ման: Նախ և առաջ սոցիալիստական հասարակարգը  
հրաշքով մի որում յերկնքից վայր չի ընկնելու, այդ  
հասարակութեան շատ ամուր հիմքերը մենք արդեն  
դրել ենք և այդ շենքի կառուցումը շատ արագ կերպով  
առաջ ենք տանում մեր վողջ յերկիրն սոցիալիստական  
վերակառուցման միջոցով: «Պարզ է, վոր մենք արդեն  
թեվակորսել ենք սոցիալիզմի շրջանը, քանի վոր սոցիա-  
լիստական սեկտորն այժմ իր ձեռքն է սլահում վողջ  
ժողովրդական տնտեսութեան բոլոր տնտեսական լր-  
ծակները, թեպետ մինչ սոցիալիստական հասարակու-  
թեան կառուցումը և դասակարգային տարբերութեան-  
ների վերացումը դեռ հեռու յե» (16-րդ համադումա-  
րում ընկ. Ստալինի ճառը):

Վորչափով սոցիալիստական սեկտորը գերելչսող է  
հանդիսանում ու ամեն որ նորանոր դիրքեր է գրա-  
վում, մենք բոլոր տվյալներն ունենք այժմ և յեթ  
(նույնիսկ բավականին ուշացել ենք) անցնելու պոլի-  
տեխնիկական դպրոցի կառուցման: Դեռ 1920 թ.,  
յերբ մեր ժողովրդական տնտեսութունը և հատկա-  
պես նրա սոցիալիստական սեկտորը ծայրաստիճան  
քայքայված էր, Լենինը գրում էր. «Անպայման խնդիր

դեռ անմիջապես անցնելու պոլիտեխնիկական կրթու-  
թեան կամ ավելի ճիշտ՝ անմիջապես իրականացնել  
դեպի պոլիտեխնիկական կրթութունը տանող այժմ և  
յեթ մատչելի քայլեր»: Այժմ այդ հնարավորութուն-  
ներն անհամեմատ ավելացել են:

Բացի այդ՝ դպրոցը, վորպես մեր յերկրի սոցիա-  
լիստական կառուցման ոժանդակող լծակներից մեկը,  
չի կարող և չպետք է մի կողմ քաշվի դեպի այդ կա-  
ռուցումը, այլ և ամենակտիվ կերպով ոժանդակի  
սոցիալիստական վերակառուցման գործին: «Պոլի-  
տեխնիկական դաստիարակութունը միայն տեխնի-  
կայի սրբոցեսի հետևանք չէ, այլ և ինդուստրացման  
գործի» (Կրուպսկայա):

Այս հարցերի հետ կապված՝ պոլիտեխնիկական  
դպրոցի կառուցման հնարավորութունները և ուղի-  
ները մասին գոյութուն ունեն մի շարք տեսակետներ,  
վորոնցից մի քանիսի հետ կձանթթանանք:

Ընկ. Պիտորակը հատկապես մի քանի տարի առաջ  
գրած իր մի քանի հոդվածներում և գրքերում (վերջին  
իր գրքույկում նա մասամբ ընդունում և ուղղում է իր  
սխալները) փաստորեն հրաժարվում է այն հիմնական  
տեսակետից, ըստ վորի պոլիտեխնիկական դպրոցի  
տեխնիկական բաղան ինդուստրիան է համարվում:  
Ըստ նրա՝ պոլիտեխնիկական դպրոցը կարելի յե կառու-  
ցել և վորոշ տեսակետից նույնիսկ ավելի հեշտ ու հը-  
նարավոր է կառուցել նաև ավելի սրբիմասիվ ձեվի ար-  
տադրութեան վրա: Միանդամայն բնական է, վոր պո-  
լիտեխնիկական դպրոցը վորոշ չափով դանդաղատու  
է լինելու և դանդաղ յե դարդացման դանդաղան աստի-  
ձանները վրա՝ նայած թե վոր շրջանում է նա աշխա-



տում, ավելի ճիշտ՝ ինչպիսի յուրահաստուկ տնտեսա-  
կան շրջապատում և նա գտնվում» : (Պիտորակ) :

Այս տողերով Պիտորակը մասամբ արդարացնում և  
այն մեղադրանքը, ըստ վորի նա մեզ մոտ գոյութուն  
ունեցող տնտեսական 5 ձևվերի համապատասխան՝  
տարբեր պոլիտեխնիկական դպրոցներ և պատկերաց-  
նում :

Պիտորակը յեյնելով այն հանգամանքից, վոր  
առայժմ գյուղական պայմաններում մասսայական  
դպրոցն ավելի հնարավորութուն ունի յերեխաներին  
անմիջապես կապելու արտադրողական աշխատանքի և  
անում և այն սխալ յեզրակացութունը, վոր այդ տե-  
սակետից գյուղի դպրոցն ավելի մոտ և պոլիտեխնիկա-  
կան դպրոցի գաղափարի իրականացման, քան քաղա-  
քինը, վորտեղ մասսայական դպրոցը դեռ չի կարողա-  
նում անմիջապես կապվել զործարանային արդյունա-  
բերության հետ : Պիտորակն այստեղ միանգամայն աչ-  
քաթող և անում այն հանգամանքը, վոր թեև պոլի-  
տեխնիկական կրթության պարտադիր պայմաններից  
ե՛ր անմիջական մասնակցութուն արտադրողական աշ-  
խատանքին, բայց վոչ ամեն մի արտադրողական և վոչ  
ամեն մի մասնակցութուն դպրոցը դարձնում են պո-  
լիտեխնիկական :

Այս սխալ դրույթից ել բղխում և այն արտաոց  
յեզրակացութունը, վորից անգամ ինքը Պիտորակն և  
իր վերջին դրբույցում հրաժարվում . «Պոլիտեխնիկա-  
կան դպրոցի իրականացման հնարավորութունը (տրվ-  
յալ դարաշրջանին համապատասխան) ավելի մեծ եր  
արհեստների ու մանուֆակտուրայի գերելխանության  
ժամանակ, իսկ առայժմ նմանապես գյուղատնտեսու-  
թյան պայմաններում» :

Յեյ այս բոլորն ասվում և այն ժամանակ, յերբ  
Մարքսը պոլիտեխնիկական կրթությունն ամբողջովին  
հիմնավորում և մեքենայացրած խոշոր արտադրու-  
թյամբ, այն հակադրելով մանուֆակտուրային արտա-  
դրության :

Պիտորակի տեսակետը խիստ քննադատության և  
յենթարկվում հատկապես մի կողմից Շուլցենի և նրա  
կալմնակիցների, մյուս կողմից Վահանյանի կողմից :

Սակայն Շուլցենի դրույթի մեջ այն վտանգը կա,  
վոր սպասելով կատարյալ պոլիտեխնիկական դպրոցի  
կառուցման համար անհրաժեշտ նախապայմանների  
ստեղծման այժմ չեն արվի «դեպի պոլիտեխնիկական  
կրթությունը տանող այժմ և յեթ մատչելի բոլոր քայ-  
լերը» :

Պիտորակին խիստ կերպով քննադատում և Ն Վա-  
հանյանն իր «О системе народного образования»  
դրբույցում . սակայն Վահանյանը պոլիտեխնիկական  
դպրոցի կառուցման իր մատնանշված ուղիներով ըն-  
կրնում և «ձախ» ուտոպիաների մեջ և վնասույթ են հը-  
րաժարվում և այժմյան պայմաններում պոլիտեխնի-  
կական դպրոցի կառուցումից :

Նա պոլիտեխնիկական դպրոցը կառուցելու հա-  
մար առաջարկում և հրաժարվել ներկա դպրոցական  
սխտեմից և անցնել դպրոց-ձեռնարկությունների սխա-  
տեմի . սակայն այսպիսի դպրոց-ձեռնարկները կարող  
են կառուցվել միայն 15 և բարձր տարիք ունեցողներին  
համար : Այս նախադի արատն այն և, վոր այս սխա-  
տեմից դուրս են ընկնում մեր բոլոր յոթնամյակները,  
այսինքն այն մասսայական դպրոցները, վորոնք առա-



չին հերթին պետք է պոլիտեխնիկացիայի յենթարկվեն. դպրոց-դործարանը, դոնե ներկա պայմաններում մասսայական դառնալ չի կարող, հետեւապես նա չէ լուծում դպրոցի պոլիտեխնիկացիայի խնդիրը. հենց ինքը Վահանյանն առանձնապես չհավատարով իր կրթ-պերիմենտի ունալ լինելուն, առաջարկում է «անմիջապես սկսել թեկուզ և մեկ արդյունաբերական կոմբինատ և մեկ հացահատիկային գործարան ստեղծելուց»: Վահանյանի փետրուարյանից դուրս է մնում և վոյշ գյուղատնտեսութունը (բացի սովխոզներէց) և գյուղական յերիտասարդութունը (բացի բատրակներէց): Այս բոլորն անշուշտ յերբեմնի տրոցկիստ Վահանյանի տրոցկիստական տարրն է ժողովրդական կրթութեան ասպարիզում:

Յեզրակացութիւն.

ա) Աշխատանքային և պոլիտեխնիկական դպրոց-բոլոր այն դեպքերում, յերբ դպրոցն այս կամ այն ձեւով աշակերտներին կապում է արտադրողական աշխատանքին, սակայն վոչ ամեն մի դոյութիւն ունեցող աշխատանքային դպրոց, թեկուզ և մեր յերկրում, — անպայման պոլիտեխնիկական է. բայց խորհրդային իմաստով դպրոցը կարող է աշխատանքային համարվել միայն այն դեպքում, յերբ նա կառուցված է պոլիտեխնիկական հիմունքներով. այս տեսակետից ճիշտ չի կարելի համարել Պ. Պանկիվիչի այն կարծիքը, ըստ վորի պոլիտեխնիկական դպրոցը — դա խորհրդային աշխատանքային դպրոցի մի յենթատեսակն է (разновидность). հետեւողական խորհրդային աշխատանքային դպրոցը, — դա միայն պոլիտեխնիկական դպրոցն է:

բ) Պոլիտեխնիկական դպրոցի հիմնական հատկանիշներն են 1. անմիջական մասնակցութիւնն արտադրողական աշխատանքային (հիմնված ինդուստրիայի վրա), 2. որդանական կապ այդ արտադրական աշխատանքի և մտավոր (ու ֆիզիկական) կրթութեան հետ: Արտադրողական աշխատանքի և մտավոր կրթութեան այդ որդանական կապի պրոցեսում յերեխան պետք է ուսումնասիրի վոչ միայն արտադրութեան հետ կապված արտադրողական հարաբերութիւնները և դրա վրա կառուցվող հասարակական յերեւոյթները — բայնի վոր արտադրական պրոցեսը լրիվ կերպով կարելի չէ հասկանալ միայն այն դիտելով վորպես հասարակութեան մեջ կատարվող հասարակական պրոցես: Հետեւապես մեր իմաստով պոլիտեխնիկական չի կարող համարվել այն դպրոցը (ինչպիսիք դոյութիւն ունեն բուրժուական յերկրներում). վորը թեկուզ և դիտականորեն ծանոթացնում է արտադրութեան տեխնիկական կազմակերպման, բայց զիտական (մարքսիստական լուսարանում չի տալիս արտադրութեան հետ կապված սոցիալ-դասակարգային յերեւոյթներին:

գ) Պրոֆեսիոնալ մասնագիտական և պոլիտեխնիկական կրթութիւն: Սխալ պիտի համարել այն բանական յերեւոյթն տարածված կարծիքը, ըստ վորի մասնագիտական կրթութիւնն անպայման հակադրվում է պոլիտեխնիկական կրթութեան և ընդհակառակն, նույնացվում վոչ մասնագիտական և պոլիտեխնիկական կրթութեան բոլոր դիտավոր ճյուղերին. «ընդհ. դիտական սկզբունքներին» ծանոթանալու համար անպայման անհրաժեշտ չէ անմիջապես աշխատելու արտադրութեան այդ բոլոր ճյուղերում. հիշելով այն ինչ



ժոր ասել և Մարգար բարձր մեքենաների կառուցվածքի ընդհանուր սկզբունքների և դրանց վրա աշխատելու համար անհրաժեշտ շարժումների սահմանափակ ձևերի մասին, — կարելի չե յեղրակացնել, վոր անհրաժեշտ գեպրում նաև միայն արտադրութեան մի հիմնական ճյուղի վրա կարելի չե ծանոթանալ արտադրութեան գլխավոր ճյուղերի «ընդհանուր գիտական ընդհանրություններին»։ այստեղ էլ կականը վոչ այնքան այն է՝ յերեխան արտադրութեան մի ճյուղում և աշխատում թե մի քանի, այլ այն, թե նա ինչպես և մոտենում այդ աշխատանքին։ յեթե նա աշխատելիս միաժամանակ ուսումնասիրում և արտադրութեան գիտական տեխնիկական հիմունքները, դրանով նա կատարում և պոլիտեխնիկոմի սրահանջը՝ ծանոթանալու արտադրութեան «ընդհանուր գիտական սկզբունքներին»։ Իսկ յեթե նա առանց այդ բոլորի միայն մեքենայորեն յուրացնում և աշխատանքի պրոցեսները և դրանց հետ կապված անհրաժեշտ շարժումներն ու ունակութեանները — անկախ նրանից՝ նա արտադրութեան մի ճյուղում և աշխատում թե մի քանի (վերջին գեպրում դա կլինի բազմաշխատութեան), դա կլինի արհեստավորական պրոֆեսիոնալ կրթութեան։

Իմ կարծիքով այս տեսակետից ճիշտ կլինեք տարբերել մասնագիտական (վորը կարող և լինել պոլիտեխնիկական և արհեստավորական-պրոֆեսիոնալ) և պրոֆեսիոնալ գաղափարները։

Յերբ մենք խոսում ենք պոլիտեխնիկոմի մասին պետք է նկատի ունենալ վոչ այնքան ուսումնասիրութեան համար անհրաժեշտ արտադրութեան ձևերի բազմազանութեանը, վորչափ ժամանակակից արտա-

դրութեան հիմնական մեթոդների, հիմնական որենթաների, տեխնոլոգիայի և մեխանիկայի հիմնական որենթաների և սկզբունքների միտրինակութեանը, շարժումները այն խմբի միտրինակութեանը, վորոնց անհրաժեշտորեն վեր և ավելում մարդու վոյշ գործունեութեանը։

«Պոլիտեխնիկական դպրոցը տարբերվում և պրոֆեսիոնալ դպրոցից նրանով, վոր առաջինում ծանրութեան կենտրոնն ընկած և աշխատանքային պրոցեսների գիտակցման մեջ, վոր նա դարդացնում և տեսութեանն ու պրակտիկան միատեղ կապակցելու, վորոչ յերեվոյթները փոխադարձ կապակցութեանն ըմբռնելու կարողութեանը, — մինչդեռ պրոֆեսիոնալ դպրոցում ծանրութեան կենտրոնը կազմում և շահկերտներին աշխատանքային ունակութեաններով դիմելը»։ (Կրուպչովսկին)։

Վոր մասագիտական ու պոլիտեխնիկական կրթութեանը չի կարելի իրար հակադրել, յերևում և նրանից, վոր վերջինս համապատասխան որդանները վորոչմամբ վորոչակի մասնագիտացում և տրվում մեր մասնագիտական դպրոցին (որ. Գյուլյերիտ), մյուս կողմից էլ պոլիտեխնիկոգիայի յեն յենթաբաժնում անգամ մեր բարձրագույն մասնագիտական դպրոցները։

Գ) Պոլիտեխնիկական դպրոցի իրականացման ու զիմեքը ներկա ետապում։

Արդեն գերիշխող հանդիսացող և արագ կերպով նորանոր զիրբեր դրավող՝ մեր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սկիտորը և հատկապես սոցիալիստական ինդուստրիան հիմնականում արդեն



ստեղծել են այն նախապայմանները, վորոնց հիման վրա արդեն կարելի չէ ա՛ցնել պոլիտեխնիկական դրա-  
րոցի կառուցման: Սակայն մենք մեր լայնածավալ  
յերկրում դեռ ունենք բազմաթիվ շրջաններ, վորոնք  
դեռ չեն ընդգրկված ինդուստրացմամբ և բացի այդ  
դեռ բոլոր վայրերում հնարավոր չի անգամ գոյություն  
ունեցող արդյունաբերությունը դարձնել դպրոցի պո-  
լիտեխնիկացիայի բաղան:

Ինչպես վարվել այժմ. — ա) նախ և առաջ ոգտա-  
դործել արդեն գոյություն ունեցող և արդեն բավական  
ուժեղ ինդուստրիալ բաղան դպրոցի պոլիտեխնիկա-  
ցիայի համար (հալթահարելով առաջին հերթին տըն-  
տեսական որդանների տեղ դերատեսչական կոնսերվա-  
տիզմը) . ոգտադործել մեքենայացման և ինդուստրաց-  
ման այն բոլոր ելեմենտները և սաղմերը, վոր կարելի  
չէ դառնել հատկապես գյուղական դպրոցը շրջապատող  
տնայնադործական և գյուղատնտեսական արդյունա-  
բերութայն մեջ, դրանք դարձնելով դեպի պոլիտեխ-  
նիզմը տանող դպրոցի առաջին աստիճանները և միա-  
ժամանակ դպրոցի միջոցով ոժանդակել, վոր արտա-  
գրութայն այդ ճյուղերը կաղմակերպվեն տեխնիկա-  
կան ու սոցիալիստական ավելի բարձր հիմունքներով:

Անգամ այնպիսի ծայրահեղ հետամնաց վայրե-  
րում, վորտեղ առայժմ վոչ մի կերպ հնարավոր չէ պո-  
լիտեխնիկական դպրոցի նվազագույն նախապայման-  
ներն ստեղծել. — ավելի լավ է կաղմակերպել աշխա-  
տանքային (ոեալ և վոչ պոլիտեխնիկական) դպրոց,  
վորից ավելի հեշտ է անցնել պոլիտեխնիզմի, քան թե  
«մաքուր» ուսանողական հանրակրթական դպրոցից:

յե) պոլիտեխնիկական կրթութայն իրականացման  
բոլոր նախադրյալները արագ կերպով ստեղծվում են  
մեղ մոտ. հսկայական քայլերով դարգանում է վոչ մի-  
այն քաղաքի արդյունաբերությունը, այլ և գյուղա-  
տնտեսութայն սոցիալիստական վերակառուցման հետ-  
ևանքով (համաձայնացում և մեքենայացում ու ին-  
դուստրացում) վերանում է դարավոր այն անջրպետը,  
վորը գոյություն ուներ գյուղի և քաղաքի միջև և վո-  
րըն իր կողմից խոշոր արգելք էր հանդիսանում պո-  
լիտեխնիկական կրթութայն ճանապարհին: Վերանում  
է և այն տարբերությունը, վոր գոյություն ուներ  
գյուղատնտեսութայն միջև «...այս բոլորը նշանա-  
կում է, վոր նորագույն տեխնիկայի կիրառմամբ գյու-  
ղատնտեսությունն ավելի ու ավելի չէ մոտենում ար-  
դյունարերական արտադրութայն մեթոդներին» (16-րդ  
համագումարում ընկ. Ֆիկովի վի ճառից):

Մյուս կողմից Խորհրդային Միութայն աշխատա-  
վորությունը և հատկապես պրոլետարիատը աշխա-  
տանքի սոցիալիստական իր մեթոդներով և հատկա-  
պես անմիջական արտադրողական աշխատանքի ու դե-  
կատորեն կյանքում իրագործում է պոլիտեխնիզմի  
ամենահիմնական սկզբունքը: Յեթե Երեքտրագավորի  
զաղգահի բանվորները հերթով Ֆինժողկոմատում վո-  
խարինում են մի շարք պատասխանատու պաշտոնյա-  
ների և վորոշ ժամանակից կրկին վերադառնում են  
զաղգահի մոտ («Правда» — «Социалистический  
ОПЫТ») նշանակում է վոր կրկին վերականգնվում է այն  
յերկար ժամանակ խախտված կալը, վոր կա «ուղեղի  
և ձեռքի աշխատանքի», մտավոր և Ֆիզիկական աշխ.



միջև: Յեթե 25 հազար լավագույն գործարանային բանվորներ զնուժ են դյուղ այն սոցիալիստներն վերահառուցելու համար, դրանով արդեն առաջին մեծ ճեղքըն է բացվում դյուղը քաղաքից բաժանող դարավոր պատնեշի մեջ:

Այս բոլորից հետո մեր դպրոցը կդառնա վոչ թե մեր յերկրի սոցիալիստական վերահառուցման աղղակներից մեկը, այլ այդ վերահառուցման ճանապարհին ընկած մի դիակ, յեթե նա չվերակառուցվի պոլիտեխնիզմի հիմունքներով:

8

ՊՈԼԻՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քանի վոր պոլիտեխնիկական կրթության առաջին նախապայմանը, — դա արտադրողական աշխատանքն է, առաջին հերթին պետք է մտածել այդ աշխատանքը կազմակերպելու մասին:

Յես այստեղ նպատակ չեմ զնուժ մանրամասն խոսելու դպրոցական արտադրողական աշխատանքի կազմակերպման մասին, քանի վոր դա առանձին և չափազանց կարևոր խնդիր է, վորով հատկապես պետք է դրադվել: Այստեղ յես կաշխատեմ միայն տալ դրա ընդհանուր ուրվադիժը:

Դպրոցում արտադրողական աշխատանք կազմակերպելիս պետք է նկատի առնել հետևյալ հանդամանքները.—1. տվյալ աշխատանքի տեխնիկական բաղադրիչ գարգացման աստիճանը, վորչափ դա մոտ է խոչոր մեքենայացրած արտադրության, այնքան ավելի յե արժեքավոր պոլիտեխնիկական դպրոցի համար: Արա հետ կապված պետք է հաշվի առնել և այն, թե

արտադրության տվյալ ճյուղի տեխնիկական բաղան, տեխնոլոգիան ու կազմակերպությունը վորքան հրանարավորութուն է տալիս դրա «տեսական ու դործնական պոլիտեխնիկական ուսումնասիրության» համար:

2. Աշխատանքի այս կամ այն ճյուղի ընտրության ու կազմակերպման համար վոչ մի զեւպքում չի կարելի աչքաթող անել և մանկաբանական մոմենտը— յերեսխաների տարիքային առանձնահատկությունները և նրանց հոգեբանական կարողությունների սահմանները:

3. Մի այլ հանդամանք, վոր նույնպես նշանակութուն ունի, դա տվյալ արտադրության ճյուղի տնտեսական արժեքն է դպրոցի շրջապատի համար:

Մեր մասսայական դպրոցը միեւջև հիմա հիմնականում յեղել է ուսուցողական և մենք հարկադրված ենք պոլիտեխնիկական դպրոցը կառուցել համարյա գատարկ տեղում: Միամտություն կլինի կարծել, թե միայն Լուսժողկոմատը և նրա տեղական մարմինները գերատեսչական ճանապարհով կարող են լուծել այս խնդիրը: Ինչպես նման բոլոր զեւպքերում, այս անգամ էլ պետք է մտրելիլդացիայի յենթարկել խորհրդային վողջ աշխատավորության ուշադրությունն ու յեռանդը և տնտեսական, պրոֆեսիոնալ ու հասարակական որդանների ու կազմակերպությունների նյութական ու մարդկային ուժերը:

Մեր մասսայական դպրոցի պոլիտեխնիկացիայի համար հարկավոր է ամենից առաջ ստեղծել նյութական— տեխնիկական բաղա. նախ քաղաքի բոլոր դըպրոցները պետք է կցվեն դոյություն ունեցող արդյունարերական կամ կոմունալ ձեռնարկությունների. առանց այս հիմնական նախադրյալի մենք դպրոցը պոլիտեխնիկական չենք դարձնի. պետք է հաղթահարել



արդէն նշմարվող, այն ղիմադրությունը, վոր ցուցա-  
հանում են տնտեսական որդանները, յեկնելով «արտա-  
դրութեան շահերից». պետք է դպրոցում նույնպէս ըս-  
տեղծել արտադրական բնագա, արհեստանոցների և այլն  
միջոցով: Խորհրդային Ռուսաստանի որինակով պետք  
է կազմակերպել հատուկ գործարան դպրոցների հա-  
մար ստանդարտային գործիքներ ու սարքավորում  
պատրաստելու. իսկ մինչ այդ՝ մեր տնտեսական մար-  
միկները՝ արեստները և գործարանները պետք է ողնու-  
թյան գան դպրոցին: Դպրոցի պոլիտեխնիկացիայի հա-  
մար արվող ծախքերը պետք է ղիտվեն, վորպէս մեր  
յերկրի ինդուստրացման նպատակով արվող կապիտալ  
ներդրումներ:

Մասսայական դպրոցի պոլիտեխնիկացիայի խո-  
չորագույն արդէլքներէջ է պոլիտեխնիկայէս պատ-  
րաստված մանկավարժական կադրերի բացարձակ բա-  
ցակալութիւնը: Պետք է վճռական քայլեր անել մեր  
մանկավարժական ինստիտուտը պոլիտեխնիկացիայի  
յեկնարկելու: Անհրաժեշտ է նմանապէս կազմակերպել  
հատուկ տեխնիկում կամ ինստիտուտ պոլիտեխնիկա-  
կան աշխատանքի հրահանգիչ— մանկավարժներ պատ-  
րաստելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է դա-  
նազան դասընթացների միջոցով պոլիտեխնիկայէս  
վերապատրաստել գոյութիւն ունեցող մանկավարժա-  
կան խնդիրները, ինչպէս և մանկավարժական մեթո-  
դական վերապատրաստման միջոցով վորակալ բան-  
վորներէջ պատրաստել դպրոցների համար աշխատան-  
քի հրահանգիչներ:

Միայն այս բոլորը կատարելով է, վոր մենք լուրջ  
կերպով կարող ենք մոտենալ մասսայական դպրոցի  
պոլիտեխնիկացիայի խնդրի լուծման:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ս

### Պ Գ Ր Ո Յ Ի Պ Ո Լ Ի Տ Ե Ի Ն Ի Չ Ա Ս Ի Ա Տ Ի Մ Ա Մ Ի Ն

(ՆՈՒՅԻՆ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻ ՀՈՍՍՐ)

1. Վերակառուցման շրջանը, չոր իրականացնում  
է յերկրի ինդուստրացման և դյուղական տնտեսութիւ-  
նը սոցիալիստական հիմունքներով վերաշինման պատ-  
մական հսկայական խնդիրները, որակարգի հարց է  
դարձրել կուլտուրայի պարլիմէնը, իբրև ամենակտուալ  
խնդիրներէջ մեկը:

Սոցիալիստական շինարարութեան վիթխարի թափը  
ամենայն սրութեամբ առաջ է բերում կադրերի պրո-  
լեմը, իբրև ամենադժվարին պրոբլեմներէջ մեկը, վոր  
անհրաժեշտաբար պետք է հաղթահարել, իբրև մեր շի-  
նարարութեան հաջողութեան ամենակարեւոր պայման-  
ներէջ մեկը:

Ժամանակի ամենամոտ շրջանում կուլտուրայի պը-  
րոբլեմը պետք է ղիտվի կադրերի պրոբլեմի անկյունա-  
տեսով, քանի վոր ամբողջ սոցիալիստական շինարարու-  
թեան համար մասսայական վորակալ աշխատավորներ  
պատրաստելու պայմանները դա յե ստեղծում:

2. Աշխատավոր մասսաների կուլտուր-քաղաքական  
սպասարկման սխտեմի մեջ ամենակարեւոր ողակը  
մասսայական դպրոցն է: Մեր առջև խոչորագույն իրն-



դիր և դրված—ամենակարճ ժամանակում պարտադիր  
ուսում մտցնել :

«Այժմ գլխավորը պարտադիր սկզբնական ուսուց-  
ման անցնելն է... այսպիսի անցումը վճռական մի քայլ  
կլինի կուլտուրական հեղափոխութեան դարձում»  
(Ստալին, Համկոմկուսի XVI համագումարի կյ-ի հաշ-  
վետութեան) :

Մենք պետք է լարենք մեր բոլոր ուժերը՝ հենց  
30—31 դար. տարում մեր Միութեան շրջաններից մեծա-  
գույն մասում ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու  
համար : Թեև այդ ժամանակաշրջանում սահմանափակ-  
վում ենք ամեն տեղ 4—ամյա սկզբնական դպրոցը մտցնե-  
լով, բայց դրա հետ միասին, իբրև ուսուց. ընդհ. հիմնա-  
կան ողակ առաջ ենք քաշում 7—ամյա դպրոցը, վոր այս  
նույն ժամանակում պետք է ընդգրկել բանվորների և  
համատարած կուլկուլտիացած շրջանների դուռը ցանկերի  
բոլոր յերեսաներին :

3. Սակայն ընդհանուր ուսման խնդիրն իսկի յեւ  
միայն ջանակի խնդիր չէ : Սա միաժամանակ և՛ վորա-  
կական տեսակի խնդիր է : Այդ պատճառով խոսելով  
մասսայական դպրոցի վիթխարի ընդլայնմամբ յերեսա-  
ներ ընդգրկելու մասին՝ մենք պետք է հատուկ պարզու-  
թյամբ զնենք դպրոցի վորակի խնդիրը, իսկ սա ամե-  
նից առաջ կընի այս հարցը—փոխել դպրոցական աշ-  
խատանքների բնույթը— մեր դպրոցը պոլիտեխնիկա-  
կան դպրոց դարձնել :

Պոլիտեխնիկական դպրոցի միտքը, այն դպրոցի,  
վոր սերտորեն կապված է արտադրութեան հետ, վոր  
ուսուցումը միացնում է հասարակական—արտադրական  
աշխատանքին—հիմնավորել են Մարքսն ու Ենգելսը :

Պոլիտեխնիկական դպրոցի միտքն արտահայտված է մեր  
կուսակցութեան ծրագրում և, իբրև հիմնական լուրճ,  
դրված է խորհրդային լեխանութեան դպրոցի մասին  
հրատարակած առաջին գեկկրեաներում.—Միասնական  
աշխատանքի դպրոցի մասին 1918 թվին հրատարակած  
գեկկարացիայում ասված է.—

«Կրթութեան ասելով մենք հասկանում ենք յերեք  
բան. 1) մտավոր կրթութեան, 2) այսպիսի ֆիզիկական  
զարգացում, վոր տալիս են մարմնամարզական դպրոց-  
ներն ու զինվորական վարժութեանները, 3) պոլիտեխ-  
նիկական դաստիարակութեան, վոր ծանրացնում է  
բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր գիտակյան  
սկզբունքների հետ, և միևնույն ժամանակ յերեսանե-  
րին ու դեպիսին գործնական ունակութեաներ է  
տալիս, վորով նա կարող է արտադրութեան ամեն տե-  
սակի տարրական գործիքների հետ վարվել» : Այսպես է  
դրել Մարքսը :— Դպրոցի պոլիտեխնիկացիայի պրոբլեմը  
հատուկ սրութեամբ ու ցայտուն է դառնում հենց այժմ,  
վորովհետև վերակառուցման շրջանի պահանջները խրա-  
տիվ կերպով պահանջում են այդ. իսկ այդ շրջանը  
անտեսութեանը վերաչինում է շատ ավելի բարձր  
տեխնիկական—եկոնոմիկական հիմունքներով : Պոլի-  
տեխնիկական—եկոնոմիկական հիմունքներով : Պոլի-  
տեխնիկամբ դադարվարը վոչ թե միայն մանկավարժնե-  
րի մի փոքրիկ խմբի սեփականութեան պիտի դառնա,  
այլ պիտի ծավալվի ամբողջ բանվոր դասակարգի մաս-  
սայի մեջ և բացարձակորեն բոլոր դպրոցական աշխա-  
տավորների մեջ :

4. Մեր դպրոցը այժմ շատ հեռու յե պոլիտեխնի-  
կական դպրոց կլինուց : Հիմնական թերութեանը—  
կրթութեան ու դաստիարակութեան այն բանավոր-



ասողական (словестно начестнически) բնույթն է,  
վոր տալիս է այդ դպրոցն իր սաներին:

Դպրոցի բանավոր-ասողական բնույթի դեմ է  
ուղղված ժողովրդական-կրթութան 2-րդ կուսխոր-  
հրդահայուսթյան հարվածներից մեկը: Սորհրդահայու-  
սթյունը վորոշեց ժողովրդական կրթութան ամբողջ  
սխտեմը վերահայմել այն խմաստով, վոր նա համա-  
պատասխանի ժողովրդական տնտեսութան վերակա-  
ռուցվող թափին և տեմպին. վորոշվեց հատկապես վե-  
րակադմել 2-րդ աստիճանի դպրոցների մեծ կոնցենտրը  
և դարձնել ՖԳՈՒՍ և տեխնիկումներ. դպրոցի պոլի-  
տեխնիկացիան հենց այս ծայրից էլ սկսվում է—Փար-  
գործուսից—վոր որդանապես կապված է արտադրու-  
թյան հետ: Չնայած իր բոլոր լեբություններին, Փար-  
գործուսը, համենայն դեպս ավելի պոլիտեխնիկ դըպ-  
րոց է, քան մեր դպրոցներից վորեւ մեկը:

Ժողովրդական կրթութան հին սխտեմը վորոշ  
չափով արգելակ էր հանդիսանում դպրոցի պոլիտեխ-  
նիկացիային: 2-րդ աստիճանի դպրոցը վեր ածելով  
տեխնիկումների, ֆզուս-ների և պրոֆդպրոցների՝  
մենք պետք է ուժեղ կերպով հարվածենք նաև պրոֆե-  
սիտնալ կրթութան նեղ արհեստավորական բնույթը,  
«վորակալորման» իրր թե դործնական մոտեցումը,  
դեմ պետք է յեղենք բանվորին մեքենայի մի հավել-  
յալ մասը դարձնելուն, պետք է սլաշտպանենք պրոֆե-  
սիտնալ կրթութան պոլիտեխնիկ բնույթը:

5. Դպրոցի բանավոր-սերտողական ցանկություն-  
ներին հակառակ, բացի ֆզուսներից, վերջին տարի-  
ներս աճել ու ամբանում է դպրոցի մի նոր տիպը, վո-

րի հիմքում դոյություն ունեցող սխտեմը սխտեմը  
հնարավորություններ կան:

Դա մի կողմից կոլխոր-յերիտղպրոցն է, վոր ա-  
ճում է դյուղում և ամբապնդում է հատկապես դյու-  
ղական տնտեսութան կոլեկտիվիլացիայի հետ կապ-  
ված, մյուս կողմից—գործարանային յոթնամյակներն  
են (ՓՅՑ). այս դպրոցը սերտորեն կապվում է ար-  
տադրութան հետ ու ղեկավարող ղեր պետք է լաղա  
դպրոցի պոլիտեխնիկացիայի ամբողջ գործում:

Գործարանային յոթնամյակների քանակը, վոր մի  
յերկու-յերեք տարի առաջ մի քանի միավորներից ու  
տասնյակներից էր բաղկացած, այս տարի հասել է մի  
քանի հարյուրի և ամենամոտ տարիներում կհասնի մի  
քանի հազարի:

Մնդիր է դրված 31—32 թվին գործարանային յոթ-  
նամյակներում ընդգրկել բանվորների բոլոր յերեխանե-  
րին: Այս ծրագրերը կիրառելու համար արդեն 30 - 31  
թվից անհրաժեշտ է ընդգրկել բանվորների յերեխանե-  
րին. մետաղագործների՝ 150 հազար, գործվածքային-  
ների՝ 150 հազար, լեռնագործների՝ 100 հազար և այլն,  
ընդամենը՝ 640 հազար:\*)

Այսպիսով, լնդիր է դրվում լայն կերպով ծավալել  
թե գործարանային շրջաններում ու քաղաքներում դո-  
յություն ունեցող նախնական դպրոցների V և հաջորդ  
լամբերը բանալով և թե յոթնամյակներին բաղմակում պ-  
լեկա դուղընթացներ բանալով:

Գործարանային յոթնամյակների վերաբերմամբ  
բանվորների պարտականությունը, (լսել նրանց յերե-

\*) Նույն սանը պիք է անել մեդանում՝ Ալաշվերդում,  
լենինականում, Դափանում:



խաների հիմնական դպրոցն է) միայն գործարանային յոթնամյակների ցանցի լայն տարածումը չէ, այլ այն— վոր թույլ չտան յոթնամյակի միայն ցուցանակը փոխվի, իբրև իրենց շրջանի դպրոցի, այլ վոր արժատապես փոխվի, իրեն՝ դպրոցի, կառուցվածքը, նրա ուսց. ըընույթը, վոր նա ավելի մոտ—սերտ կապվի արտադրութեան հետ:

Գործարանային յոթնամյակը Փզուս—ի հիմքը պետք է դառնա: Առհրաժեշտ է, վոր արդեն 31—32 տարում գործ. յոթն. ուլիած գիտությունը պարտավորեցուցիչ լինի բոլոր Փզուս մտնողներին համար, իսկ Փզուս—ի հաջող աշխատանքը խոշոր չափով կախված է այն պոլիտեխնիկական պատրաստականութեան վորակից, վոր կտա գործ. յոթնամյակը: Ուշադրություն դարձնել գործ. յոթնամյակին, կնշահակի ուշադրություն դարձնել արագա բակվորական կարիերի վորակին և արտաբատականութեան համար պիտանի բարձրորակ բարձրական կադրեր պատրաստելու, համընթաց, այդ կադրերը պատրաստելու հիմնական և ամենալավ դպրոցն է, արդեն աճում է հսկայական թափով: Յեթե 29—30 դար. տարում—աշնանը Փզուս ընդունվեցին 35 հաղար ուսանողներ, ապա 30 թ. ձմռան ընդունելութեան ժամանակ ընդունվեցին 57 հաղար. իսկ այս 30—31 թ/ի աշնանը վորոջված է ընդունել 135 հաղար մարդ, թեև փաստորեն կընդունվեն 170 հաղար: Ուստի պետք է ամեն կերպ, բանվորական շրջաններում, դեռահասներին և դպրոցներից դուրս մնացածներին նախապատրաստել Փզուս—ների համար:

6. Գոլիտեխնիկական դաստիարակութեան և կըթու-

թեան հիմքը աշխատանքը պետք է կադմիս Գպրոցում աշխատանքի գրույթի խնդիրը պետք է լինի գանադան տեսակի ու ձևի աշխատանքի միջոցով, ամենապարզից սկսած (կենցաղային շրջապատի ամենաբաղձադան նյութերից)—անցնել այժմյան թե արդյունագործական ու թե դյուղատնտեսութեան ժամանակակից արտադրական աշխատանքներին. ձևերի պրիմիտիվ մշակումից ուսանողներին հասցնել մեքենաների գործին տիրապետելու աստիճանին: Ուստի աշխատանքի դպրոցը չպետք է նեղ արհեստավորական բնույթ կրի: Զեռքով աշխատելու ձևերը հենց ուսուցման ամենափոքր հասակում միայն մի միջոց են սովորողներին հետզհետե ավելի բարդ ձևվերի վարժեցնելու. իսկ ուսուցման բարձր տարիքում ուսանողների առջև պետք է բացվի մեքենայի էյությունը և ողնի հեշտութեամբ ու արագ յորացնելու ժամանակակից մեքենական արտադրությունը:

Դրա հետ միասին աշխատանքը դպրոցում պետք է յերեխաներին այնպես դաստիարակի, վոր նրանք կտրուղանան աշխատել, հմտութեամբ կադմակերպել իրենց աշխատանքը, աշխատել կոլեկտիվ, բմբոնել աշխատանքի պրոցեսը և մշտապես, աշխատանքի պրոցեսի ընթացքում, ծանոթանալ տեխնիկային ու տեխնոլոգիային, շրջապատի արտադրութեան մեջ տեսական տեղեկություններ ձեռք բերել ու հիմնավորապես յորացնել ինչպես արտադրութեան ընդհանուր գիտական սկզբունքները, նույնպես և աշխատելու կարելիոր գործնական ձևերը՝ աշխատանքի բաղձադան ճյուղերում:

Աշխատանքը դպրոցում պետք է հասցնի արտադրութեան բաղձադան ճյուղերի ծանոթանալուն. ընդամին հատկապես կարելիոր է ծանոթանալ ամենադը-



խավոր արտադրություններին ու այն հիմնական արտադրական պրոցեսներին, վորոնք ընդհանուր են արտադրության մեծ մասի համար, ինչպես որինալի, եներգիայի և նրա ոլորտործման, մեխանիզմների, մեր տեխնիկայի համար կարևոր նշանակություն ունեցող գլխավոր նյութերի, քիմիական պրոցեսներին—վոր մեր տնտեսության մեջ շարունակ ալելի ու ալելի մեծ նշանակություն և ստանում—գյուղական տնտեսության հիմնական ճյուղերի, մարդու և նրա աշխատանքի:

Այս բոլոր գիտությունները պետք է լուսարանել բանվոր դասակարգի պայքարի և շինարարության տեսակետից. բանվոր դասակարգի խնդիրների ու շահերի, սոցիալիզմի կառուցման դործում նրա ուժերի լարման տեսակետից: Դրա համար եյ պոլիտեխնիկական կրթությունն ու դաստիարակությունը մեր դըպրոցներում ընդհանուր կոմունիստական դաստիարակության, աշխատանքի սոցիալիստական ձևերի ու ժամանակակից արտադրության կարճակերպության սոցիալիստական բնույթի պայքարի, հիմնական կարեվոր մասն և հանդիսանում:

7. Արտադրությունից կտրված դըպրոցում այսպիսի դաստիարակություն չի տրվի: Դեռ ալելին. այսպիսի դաստիարակությունը կարող է հաջող լինել միայն արտադրության հետ սերտ հարաբերությունում, դործարանում ու դավորում յերեխաների աշխատանքին՝ մասնակցությունում մեծահասակ բանվորների հետ միասին կողք-կողքի: Մարքան ստում և, թե «յերկուսեոի մարդկանց միավորումն ու ձուլումն բանվորի անձնավորության մեջ և այլ բաղմաղան հարցեր փլուզածության և ստրկության ախտավորված աղբյուր են

հանդիսանում, յերբ յերևան են դայիս դեռ ևս իրենց կողմից, անմիջապես կապիտալիստական ձևով—ուր բանվորը դոյություն ունի արտադրության պրոցեսի համար և վոչ թե արտադրության պրոցեսը բանվորի համար,—այն ինչ այդ միավորումը համապատասխան պայմաններում—ընդհակառակը, մարդկության դըպրոցման աղբյուր պետք է դառնա»:

Արդյոք կարո՞ղ ենք մենք այժմ իրականացնել ընդհանուր կրթական պոլիտեխնիկական դըպրոցը Մարքսի ու Լենինի վոզով: Մոցիալիստական շինարարության վիթխարի և շարունակ աճող պայմաններում, այն պայմաններում, յերբ մենք մեր ամբողջ տնտեսությունը վերաշինում ենք բարձր տեխնիկայի վրա հիմնելով ու վերակառուցում ենք սոցիալիստական հիմունքներով, պոլիտեխնիկական դըպրոցը կարելի յե, պետք է և կկառուցվի անպայման: Այդ ճանապարհին յեղող դժվարությունները պետք է հաղթահարվեն:

8. Իսկ ի՞նչ դժվարություններ կան մեր առջև պոլիտեխնիկական դըպրոցի կառուցման դործում:

Դժվարություններից մեկն այն է, վոր մեր դըպրոցը աշխատանքի համար շատ վատ, իսկ յերբեմն ամենեվին կահոյվորված չի:

Վերջին մեկ-յերկու տարվա վործը ցույց է տալիս, վոր յեթե դըպրոցը համատությունում արշխատի, յեթե ձգտի կապվել արտադրության հետ, յեթե այս դործով հետաքրքրվեն բանվորներն ու տնտեսադեաները, այս պետք յեղած կահանվորությունը կհաջողվի ձեռք բերել: Հաջողվում է դրա մի մասը կարճել անպետքացած և արտադրության համար քիչ արժեք ունեցող կահանվորությունից. բանվորների հետաքրքրու-



թյունն ու ողնությունն այս գործին յերբեմն փայլուն  
հետեւանքներն և տալիս դպրոցի աշխատանքային կա-  
հավորությունն արագ բարձրացնելու տեսակետից :

Ամեն մի դպրոց ձգտում և իր արհեստանոցները  
կազմակերպել : Պետք է շրջանային արհեստանոցներ  
կազմակերպելու ճանապարհը բռնել, վարը միանդա-  
մից մի քանի դպրոցները կապատարիկ (քաղաքում) :  
Սրբեն մի այնպիսի քայլը կարող և դրական հետե-  
վանքներ ունենալ թե վարակի ու կահավորության բը-  
նույթի իմաստով, և թե հասկացես արհեստանոցներն  
ավելի լրիվ կերպով ոգտագործելու իմաստով : Բան-  
վորները ուշադրությունը—դպրոցական կամ շրջանա-  
յին արհեստանոցները կահավորման գործում, անկաս-  
կած դրական հետեւանք կտա :

9. Յերկրորդ մեծ դժվարությունը պոլիտեխնի-  
կական դպրոցի համար պատրաստված ուսուցչություն  
չունենալն է : Այստեղ բանը վոչ միայն պոլիտեխնիկա-  
կան աշխատանքի ղեկավարներ չլինելն և, այլ և \ աս-  
տիճանի վորեւ ուսուցչի ամենաթույլ պոլիտեխնիկա-  
կան պատրաստություն չունենալը, կամ 2-րդ աստի-  
ճանի դպրոցի այս կամ այն առարկայի ուսուցչի ան-  
պատրաստ լինելը :

Վորպեսզի դպրոցի ամբողջ կրթական աշխատան-  
քը և ամբողջ դաստիարակությունը կապված լինի  
արտադրության հետ, համակված լինի արտադրական  
հետաքրքրությամբ, մոտ լինի այն խնդիրներին, վոր  
ամեն մի ավյալ մամենաում վորոչում և բանվոր դա-  
սակարգը,—այս անհրաժեշտ և, վոր ամեն մի դպրո-  
ցական աշխատավոր արտադրության շահերի և բան-

վոր դասակարգի հետ սերտորեն կապված լինի, ու դի-  
տեսնա արտադրության հիմնական սկզբունքները :

Այդ դժվարությունը հաղթահարելու համար, ամ-  
բողջ ուսուցչության և վերապատրաստության և պատ-  
րաստության գործում հսկայական լարումն պետք  
է ստեղծել նրա (ուսուցչության) պոլիտեխնիկական  
կրթությունն ու ունակությունը բարձրացնելու հա-  
մար. իսկ պոլիտեխնիկ աշխատանքը ղեկավարելու  
համար պետք է յեռանդով ու համարձակ շարքային  
բանվորներ առաջ քաշել մանկավարժական աշխատան-  
քի : Մի քիչ քնդհանուր մանկավարժական պատրաս-  
տականություն ստանալով, նրանք ավելի լավ ու հա-  
ջող կտանեն ուսանողների պոլիտեխնիկական սրտ-  
րաստության գործը, քան այժմ աշխատող ուսուցչու-  
թյունը :

10. Ամեն մի գործարանային 7-ամյակ պետք է ձրգ-  
տի վորպեսզի իր մեծահասակ աշակերտներին դոնե քիչ-  
չատ տեղական գործնական աշխատանք տա արտադրու-  
թյան մեջ : Իհարկէ, սա դեռ չի վորոչում պոլիտեխնի-  
կական պատրաստության գործերը : Սակայն գործարա-  
նային 7-ամյակի մեծահասակ աշակերտների արտադրա-  
կան պրակտիկան (մեկ յերկու ամիս տեղողությամբ)  
վորեւ գործարանում, մի քայլ և, վոր մոտեցնում է  
դպրոցին պոլիտեխնիկական դաստիարակությունը լայ-  
նորեն ծավալելու : Վերջին տարվա ընթացքում, այն  
դպրոցները վորոնք իրենց աշակերտներին արտադրական  
պրակտիկայի յեն տարել, միավորներից աճեց, հասավ  
տասնյակները ու պետք է աճի, հասնի հարյուր երկ ու  
հարորների : Դրա համար անհրաժեշտ է մի կողմից՝  
արթնացնել, հրահրել իրենց՝ դպրոցներին, վոր բը-  
նեն հիմնարկներում—գործարաններում իրենց աշա-



կերտներին արտադրական պրակտիկայի տանելու ճանապարհը (արտադրութան մեջ արտադրական պրակտիկայի ձգտում արդեն շատ դպրոցներում կա), իսկ մյուս կողմից՝ պլատի կուրսել տնտեսագետների այն սառն ու յերբեմնի անվստահ վերաբերմունքը հողում այդ պրակտիկայի, վոր կա: Գործարանի բանվորները, ինժեներներն ու տեխնիկները կարող են վոչ միայն աջակցել, վոր յերեխաներին թույլ տրվի այդ պրակտիկան, այլ և պրակտիկայի յեկող աչակերտների նկատմամբ իրենց ուշադիր վերաբերմունքով ոգնեն նրանց, վոր արագ յուրացնեն արտադրութան հիմնական սկզբունքները, արագութամբ սովորեն այս կամ այն մեքենայի կամ դաղդյահի հետ վարվելը, վորոնց մոտ աշխատում են յերեխաները:

11. Մինչև այժմ դպրոցի ծրագիրը, նրա արտադրական պլանը, դպրոցի հասարակայնորեն ոգտակար աշխատանքի ծրագիրը, նրա աշխատանքային պատրաստականութան ծրագիրը—միայն ուսուցչութան գործն էյին: Ուսուցչութունը պլաններ ու ծրագրեր եր մշակում դպրոցի մեջ պարբերակված, յերբեմն կյանքի անմիջական ու եյական ինդիքներից կտրված, անկախ ու չհամաձայնեցված սոցիալիստական շինարարության այն հրատապ հարցերին, վոր դրված եր մեր առջև: Արտադրութան բաժնիներին կենդանի մասնակցությունն այս անցնող տարվա դպրոցական աշխատանքների ծրագիրը կազմելուն, բանվորների ակտիվ մասնակցությունը այդ ծրագրի առա՛ ձին մասերի մշակմանը, հատկապես հասարակայնորեն ոգտակար և օյուրիտեխնիկական պատրաստության ծրագրի, զգալի չափով կողնի փշրելու դպրոցի ներքին ինքնապարփակման հարցը, և դպրոցը արտադրութան որդանական մասը կղարձնի, տվյալ

ղափողի կամ գործարանի ատրոլջ հասարակական և տնտեսական կյանքին հաղորդակից կղարձնի:

12. Անհրաժեշտ է, վոր մենք զավոդի վարչությունից, կամ տնտեսական միավորությունից ստանանք դպրոցի պոլիտեխնիկացիայի համար կոնկրետ ոգնություն. այն է:

ա) Գործարանային յոթնամյակի և ֆգուսի բարձր յամբերի ուսանողների համար պետք է կազմակերպել ուսում. ականարտադրական ցեխեր, զավոդի ցեխերին իրավահավասար. պետք է ոգնել դպրոցում արհեստանոցներ և բանելու սենյակներ կազմակերպելուն:

բ) Արտադրութան մեջ դպրոցի համար անհրաժեշտ կահավորություն. (դաղդահներ — ուսումնական պարագաներ):

գ) Գործարանային 7-ամյակի 6-րդ և 7-րդ յամբերի աչակերտների համար անհրաժեշտ է արտադրական պրակտիկա կազմակերպել:

դ) Ամեն մի գործ. յոթնամյակ պետք է կցել վորեւ զավոդի կամ գործարանի վոչ թե ձեւականորեն, այլ վոր 7-ամյակը գործարանի որդանական մասը գտուն:

ե) Ամեն մի գործ. 7-ամյակ պետք է իրրեւ հիմք կցված լինի վորեւ ֆգուսի այն հաշվով, վոր այդ հիմնարկների ծրագրերը, ընդունելության և ավարտման ժամանակները լինեն:

զ) Զավոդի ինժեներ-տեխնիկական ուժերից մեկին պետք է առանձնացնել իրրեւլ աչակերտների և ուսուցիչների կոնսուլտանտ և հենց դպրոցում մշտապես աշխատելու համար:

է) Առաջիկա տարում դպրոցի բոլոր ուսուցիչներին հնարավորություն պետք է տրվի լայն կերպով ծա-



նոթանալու արտադրութեանը և մի քիչ պրակտիկ աշխատանքներ տանելու հիմնարկում :

ը) Յեւ վերջինը, վոր դպրոցը դործարանի և դավոճի ընդհանուր արտադրական պլանում հաշիւ տանվի, իրրեւ մի հատուկ միավոր, վորը արտադրական Ֆինսպլանում իր հատուկ բաժինն և հատարում :

13. Պրոֆիկադակերպութեաններին մենք պետք է առաջադրենք այս պահանջները :

ա) Պայքարել այն բոլոր անհրաժեշտ պայմանների համար, վոր տնտեսական որդանները պետք է տան դպրոցին :

բ) Գործ. 7-ամյակի համար վորակյալ բանվորներին աշխատանքի հրահանդիչներ տալ, և լավագույն բանվորներին առաջադրել իբր գործ. 7-ամյակներ վաճռելներ :

գ) Փոքր ուձիկ ստացող բանվորներին յերեխաներին ոգնելու համար կուլաֆոնդից վորոշ դուժար հատկացնել :

դ) Հաջողացնել, վոր արտադրութեան բոլոր կուլտ չիբնարկները (ակումբ, կինո, գրապարտն, վորոշված ժամանակին անհրաժեշտ ֆիլմաներ, ներկայացումներ և այլն տան դպրոցին :

ե) Իր պարտականութեանը համարել յերեխաներին ճամբար տանել (ամառային դպրոցի կադակերպումն) . դրա համար պետք է մոբիլիզացիայի յենթարկել բանվորական հասարակայնութեանը :

զ) Հիմնարկում դպրոցէ պոլիտեխնիկացիային աջակցող խմբակներ կադակերպել :

է) Գործարկումի նիստին և բանվորական ժողովներում պարբերաբար լսել դպրոցի հաշիւտվութեանը :

ը) Դպրոցին մասնակից անել հիմնարկի գումարան կադակերպութեաններին (արտադրական հանձնուժով, կամավոր խմբակներ, արչայինների շտաբ, ակումբի վարչութեան, ղանազան հասարակական բջիջներ և այլն) : Ահա այն հիմնական ինդիքները, վոր մենք պետք է առաջադրենք տնտրգաններին և պրոֆութեաններին :

14. Կոմյերիտութեանը, վոր այնպես յերկար պայքարեց հանուն պոլիտեխնիկական դպրոցի և վորի հակայական ողնութեամբ այժմ վերականգնվում է ժողովրդական կրթութեան սիստեմը, պետք է ամեն ջանք դործ դնի, վորպեսզի պոլիտեխնիկական դպրոցի դադախարը կենսագործվի կյանքում : Լայն ինք ագործունեյութեան հիմունքով կոմյերիտական կադակերպութեանները պետք է ամենալայն արշավ հայտարարեն հանուն դպրոցի պոլիտեխնիկացիայի : Գործարանի ցեխի բջիջից մինչև կոմյերիտական ղեկավարող որդանները բոլորը պետք է համակցված լինեն դպրոցի պոլիտեխնիկացիային աջակցող բջիջներում (սեկտոր) կոմյերիտներն ամենաառաջինը և ամենաակտիվը պետք է լինին :

Զավոզի կոմյերիտական բջիջը պետք է դպրոցի բջիջի շեֆը հանդիսանա և ակտիվ կերպով մասնակցի դպրոցի ամբողջ պոլիտեխնիկական ղեկավարութեանը, պայքարի դպրոցի համար թեկուզ մի դադկյահ ձեռք բերելու, պայքարի, վոր դպրոցը զավոզի որդանական մասը գտնու : Կոմսոմոլը պետք է մոտեցնի դպրոցը գործարկումի և գործարանի վարչութեանը : Առանց դպրոցի իրեն աշակերտներ մոբիլիզացիայի՝ հանուն դպրոցի պոլիտեխնիկացիայի, խոսք եւ չի կարող լինել դպրոցի պոլիտեխնիկացիայի մասին : Անհրաժեշտ է դադրոցական ամբողջ մաստան պայքարի հանել վորպեսզի աշակերտները գործարաններում աւ գալուցներում ապի-



տատորներ լինեն—բանլորական լայն մաստաների մեջ, իրենց ծնողների շրջանում՝ հանուն սրբաբարեբարի խոսք կական դպրոցի: Դպրոցական ամբողջ մասսան կազմակերպելու, նրան իրական մարտական ծրագրով դիմելու գործը պետք է կատարի կոմյերիտմիությունը և հատկապես սիոններական կազմակերպությունը, վորովհետև վոչ վոք այնպես մտա չի կանգնած դպրոցին, ինչպես սիոններական կազմակերպությունն ու կոմյերիտմիությունը:

15. Բայց բանլորները, ինժեներները և տեխնիկները կոնկրետ կերպով ինչպե՞ս կարող են մոտենալ դրսեցը արտադրութեանը մոտեցնելու, նրա պոլիտեխնիկացիայի խնդրին: Այժմ խոչոր հիմնարկներին կից կազմակերպվող կուլտուրական շինարարութեան խորհուրդներում, այդ հիմնարկներին կուլտուրական կոմբինատի կազմի մեջ, անհրաժեշտ է դպրոցի պոլիտեխնիկացիային աջակցող բջիջներ (սեկտոր) կազմակերպել ուր պետք է ներդրավել կոմյերիտական վորակյալ արտադրող բանվորներին, տեխնիկներին, ինժեներներին, տնտեսագետներին, գյուտարար բանվորներին, վորի հետ կապված է ավյալ հիմնարկը: Այդ աջակցող բջիջները կարող են.

- ա) ամեն կերպ ողնել դպրոցներին արհեստանոցների կահավորմանը.
- բ) ինժեներական ուժերն առաջ քաշել՝ ղեկավարելու դպրոցի պոլիտեխնիկ աշխատանքները.
- գ) կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման կուրսեր պոլիտեխնիկացիային տիրապետելու լիմաստով.
- դ) ուսուցիչներին համար արտադրական սրակտիկա կազմակերպել—արտադրութեան մեջ.
- ե) այնպես անել, վոր դպրոցը միայն ուսանելու տեղ չլինի, այլ հիմնարկի արտադրական ցեխներին մեկը

դ) բջիջը պետք է դպրոցի արտադրական եքսկուրսիաներ կազմակերպելուն աջակցի:

Մակայն իհարկե սրանով չի սահմանափակվում բջիջի անխլիքները. ելի բազմաթիվ խնդիրներ կան, վոր կարող և հարուցել և կենսագործելուն աջակցել բջիջը \*):

16. Հիմնարկներին կից կուլտուրալական խորհուրդներում դպրոցի պոլիտեխնիկացիային աջակցող բջիջը կամ սեկտորը բաժան—բաժան չպիտի լինեն: Այն չբժաներում, ուր մի քանի արտադրական հիմնարկն'ը կան, շրջանային կուլտուր—քաղաքական խորհուրդներին կից պետք է դպրոցի պոլիտեխնիկացիային աջակցող մի միասնական բջիջ կազմակերպել: Դրանց պարտականութեանը պետք է լինի, բացի առանձին բջիջների համար վերը հիշվածները—ավելի լայն չափով, մի քանի դրսեցըներին համար ուսուցիչներին վերապատրաստման գործը կազմակերպել, սխտեմատիկ եքսկուրսիաներ, արհեստանոցներ կազմակերպել մի քանի դպրոցներին համար և դպրոցը արտադրական հիմնարկի մի տեխնիկացիաներ: Այսպիսի աջակցող սեկտորները (բջիջները կարող են թանգարաններ կամ ավյալ շրջանի արտադրական գիտական ցուցահանդեսներ կազմակերպել), վոր իհարկե, մեծ նշանակութեան կունենա մի ամբողջ շարք արտադրութեանների հետ ծանոթանալու համար, կարող է մորթիլիկացիայի յենթարկել բանվորների, ինժեներներին, տեխնիկներին ակտիվը, վորոնք կաջակցեն պոլիտեխնիկական դաստիարակութեանը դպրոցում և դպրոցից դուրս, կարող և աջակցել մանկական տեխնիկական կայաններ, տեխնիկական խմբակներ և այլն կազմակերպելուն:

\* ) 15-րդ կետը թարգմանված է համառոտ եյական դժերով ԾԱՆ. ՈՍԲ.



17. Դպրոցի պոլիտեխնիզացիայի գործին պետք է անցնեն բանվորական բոլոր մասսաները: Միայն դպրոցի և բանվորների ջանքերի համագործակցութեամբ, անգլյակներով այդ գործի մեջ ինժեներ-տեխնիկական ուժերը և տնտեսագետներին, կարելի յե պոլիտեխնիկական դպրոց ստեղծել.— իսկական կամուսխտական դաստիարակութեամբ դպրոցներ, սոցիալիստական աշխատանքային կուլտուրայի համար մարդիկ պատրաստող դպրոց. վերջսակառակապես կամուսխտաբան հաստատելուն ընդունանք սերունդ դաստիարակող դպրոց:

#### Վ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ «ԳԵՊԻ ՊՈԼԻՏԻԿԱԿԱՆ ԳՊՐՈՑ» Գ ՔՈՒՅԿԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական վերակառուցման հետ կապված՝ մեր ժողովրդական կրթութեան և հատկապես դպրոցի վերակառուցման հիմնական ուղակը, դա պոլիտեխնիզացիայի խնդիրն է:

Այդ խնդրի հսկայական կարևորութեան հետ համեմատած՝ մեղ մոտ, դժբախտաբար շատ քիչ բան է արվում զրա հետ կապված տեսական և գործնական հարցերի լուսարանման և մշակման համար: Բացի մի քանի ամսադրային հոդվածներից և միայն վերջերս կատարած մի քանի թարգմանական հրատարակութեաններից, հայերեն լեզվով համարյա վուչինչ չունենք: Հետեւյալեա ավելի մեծ խնամքով ու զգուշութեամբ պետք է վերաբերվենք դեպի այն բոլորը, ինչ վոր մեզ մոտ լույս է տեսնում և անմիջապես կլանվում մասսայական լուսաշխատավորութեան կողմից:

Այս գիտողութեաններն անելու առիթ է տալիս ընկ. Վ. Աստվածաբանի «Դեպի պոլիտեխնիկական

դպրոց» գրքույկը, վորը փոխանակ պոլիտեխնիզացիայի հետ կապված տեսական և գործնական խնդիրներին լուսարանման, միայն չփոթ է ստեղծում այդ հարցերի շուրջը.— այս փոքրիկ գրքույկում բավականին շատ բան է արված այդ ուղու ընթացքում:

#### Ա) Վ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ «ՆՎԵՐՆ» ԱՐՏԱԳՐՈՒՅՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Նախ և առաջ թեկուզ և բրոշյուրային գրականութեան մեջ (նվիրված արտադրութեան բանվորներին), այնուամենայնիվ պետք է մի փոքր ավելի պատասխանատու մոտեցում ունենալ դեպի արծարծվող խնդրի լուսարանումը ու հարգանք դեպի ընթերցողը և վուչ թե բավականանալ այդ խնդրին վերաբերող 1-2 դրբի բովանդակութեան վերապատմելով, այն ել վուչ ճշտութեամբ:

Գրքույկի այսպես ասած տեսական մասը,— դա հիմնականում Պանկեվիչի «Պոլիտեխնիզացիայի շխտաշխարհը» և վերջում, այն ել, ինչպես ասվեց, մեծ մասամբ աղճատված ձևով: Այսպիսի դեպքերում առհասարակ ընդունված է հիշատակել աղբյուրը, վոր չի կատարում հեղինակը, թեպետ նա վուչուց տեղեր վուչ կատարում է Պանկեվիչից. որ.— Վորակյալ աշխատանքը տարրեր հասարակական շրջանում տարբեր է: Արտադրութեան միջոցների փոփոխման հետ միասին, փոփոխվում են նաև նրա ձևերն ու բովանդակութեանը: Տնտեսական-հասարակական դարաշրջանի դարգացման հետ փոխվում ու դարգանում է աշխատանքը, աստիճանաբար կատարելագործվելով և անցնելով ցածր աս-



տիճանից դեպի բարձրը, իսկ կոմունիստական հասարակակարգում աշխատանքի ներկա ձևը, ի հարկե կը վոչնչանա և միանգամայն կիլոկվի» (Էջ 3) :

Այսպես ե սկսում ընկ . Աստվածատրյանն իր գրքույկը, տալով պոլիտեխնիկի պատմական անալիզը և դարգացման հեռանկարները . . .

Квалифицированный труд в различных общественных формациях различен: при переходе от одной степени развития человеческого общества к другой, он изменяется и по форме и по содержанию. С каждым новым этапом общественно-экономического развития он усложняясь и совершенствуясь превращается из низшей формы в высшую. Коммунистическое общество придет к отрицанию квалифицированного труда в современной форме» .

Սա յեւ գրված է «Պոլիտեխնիչեսկայա չկուրս» Էջ 38 :

Ով հասկանում է ոուսերեն և հայերեն, նրա համար պարզ է, վոր ասալինը միայն անհաջող թարգմանություն է Պանկեվիչից :

Բայց անցնենք հեղինակի մտքերի ըստ էյության քննության :

Հնարավոր չէ և կարիք ել չկա մեկ-մեկ հիշատակել և վերլուծել հեղինակի բոլոր սխալ ու շիտթ դրությունները . հիշատակելով միայն դրանցից մի քանիսը, ավելի հանդամանորեն կանդ անենք մասնադիտական և պոլիտեխնիկական կրթության խնդրի վրա, վորի նկատմամբ ընկ . Վ . Աստվածատրյանն անթույլատրելի աղավաղումներ է կատարում :

## Բ) ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄՄՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍԻՍՐԱ-ԿՈՒՅՑ ԵՆ ՅԵՐԱ ԻՍՏԱՏՈՒՄԸ

1) Նախ և առաջ ընկ . Վ . Աստվածատրյանը, խոսելով պոլիտեխնիկական դաստիարակության նախապայմանների մասին, բավարար չստիով չի լուսարանում սոցիալական-դասակարգային բնույթի նախապայմանները հատկապես անցողիկ շրջանի հասարակության մեջ . դուցե նրա կարծիքով այդ նախապայմաններն առհասարակ չկան մեղ մոտ, մանավանդ, վոր հեղինակն իր գրքույկի 17-րդ էջում ասում է՝ «Պոլիտեխնիկական դպրոցն ապագայի դպրոցն է» . բայց սրա մասին հետո :

2) Վերելում հիշատակված սոցիալ-դասակարգային մոմենտի թերադեհատումից ե բղխում այն, վոր ըստ հեղինակի «Այստեղ բանվորը, վոչ միայն կատարող է, այլև արտադրության պրոցեսի ղեկավարող» : Մի՞թե կապիտալիստական յերկրների և Սորհրդային Միության բանվորի տարբերությունը միայն այն է, վոր մեղ մոտ բանվորը նաև արտադրության պրոցեսի ղեկավար է . այժմ կապիտալիստական յերկրներում ել արդեն ստեղծվել է (ճիշտ է սակավաթիվ) արտադրության պրոցեսի ղեկավար վորակյալ բանվոր-տեխնիկի տիպը . մեր բանվորի էյական տարբերող հատկանիշը դա չէ, այլ այն, վոր նա, հանդիսանալով իշխող դասակարգի ներկայացուցիչը, վոչ միայն մասնակցում է արտադրության պրոցեսի ղեկավարման, այլ մեր վոջ ժողովրդական տնտեսության (և վոչ միայն արդյունաբերության, ինչպես հետևյալ էլում ասում է ընկ . Վ . Աստվածատրյանը, այդ դեպքում ԽՍՀՄ կմնա դյուղի և քաղաքի, դյուղատնտեսության



և քաղաքի արդյունաբերության միջին անջրպետի վերացումը, ի՞նչ պիտի ասենք 25 հազարականների մասին, վորոնք գյուղատնտեսությունը սոցիալիստորեն վերակառուցում են) պլանավորման, կազմակերպման ու ղեկավարման, մեր յերկրի վողջ հասարակական-քաղաքական և պետական կյանքի ղեկավարման, դրանով և սոցիալիզմի կառուցման մեղ մոտ :

Ընկ. Վ. Ստուվածատրյանի դրվածքը թերադնա-հատում է բանվորի, վորպես իշխող դասակարգի ներկայացուցչի դերը և դրանով սահմանափակում և աղճատում է պոլիտեխնիկական կրթության խնդիրները :

3) Այստեղից ել բղխում է այն թերի, սխալ բնորոշումը, վոր արվում է պոլիտեխնիկական կրթության (եջ 20). այստեղ թվարկվում է պոլիտեխնիկական կրթության 5 հատկանիշ և դրա մեջ վող մի բառ չի ասվում կոմունիստական բայլչևիկյան դաստիարակության մասին, իսկ առանց սրա պոլիտեխնիզմը վեր է ածվում նեղ տեխնիզմի :

Իդուր չե, վոր «Պրավդան» 1-ին պոլիտեխնիկական համադումարին նվիրված իր առաջնորդողում գըրում է. «Ժողովրդական կրթության խորհրդային սխտեմի պոլիտեխնիզացիան չի կարելի ալատել քաղաքականությունից : Չի կարելի չեչաը դենել պոլիտեխնիզացիայի տեխնիկական կողմի վրա : Արտադրության ուսումնասիրությունը չպետք է սահմանափակվի արտադրության տեխնիկայով. նա պետք է որդանապես կապվի պրոլետարիատի ղեկատուութայի և սոցիալիզմի շինարարության հետ» :

Դասակարգային պայքարի սրման Ծերկա չըլանում (հատկապես իդեոլոգիական ճակատում) աչքաթող անել այն հանգամանքը, նշանակում է որբեկտիվորեն աուրք տալ ոպորտունիզմին :

### Գ) ԱՄՐԲՍԻ ՅԵՎ ԼԵՆԻՆԻ ՌԵՎԻԶԻԱՆ ՊԱՆԿԵՎԻԶԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ

4) «Աշխատանքի դպրոցի առանձնահատկությունները մեկը նրա պոլիտեխնիզմն է» : (եջ 9) :

«Պոլիտեխնիկական դպրոցը չի կարող հակադրվել աշխատանքի դպրոցին. նա վերջինի զանազան ձեյբերից մեկն է : Բայց ամեն տեսակի դպրոց պոլիտեխնիկական չե, վորովհետև նա (աշխատանքի դպրոցը) զանազան նյութական (տեխնիկական Մ. Ս.) բաղա ունի» (եջ 17) :

Նախ և առաջ այս յերկու եջերում արտահայտված յերկու մտքերի միջև կա սովորական տրամաբանական հակասություն (գուցե հեղինակը սա համարի դեպեկտիկական հակասության որինակ) :

Թորք եջում հեղինակը պնդում է, վոր աշխատանքի դպրոցի առանձնահատկությունները մեկը, նրա պոլիտեխնիզմն է, իսկ 17-րդ եջում հայտնում է, վոր ամեն մի աշխատանքային դպրոց պոլիտեխնիկական չե :

Ծիշտ չե, վոր աշխատանքի դպրոցի առանձնահատկությունները մեկը նրա պոլիտեխնիզմն է. յեթե այդպես լիներ, պոլիտեխնիկական կարևորագույն բաղամասիվ բուրժուական յերկրների բաղամասիվ դպրոցներ, վորոնք համենայն դեպս աշխատանքային են, բայց վող մի դեպքում պոլիտեխնիկական, այդ դեպքում մենք պետք է պոլիտեխնիկական կրթության



կողմնակիցներ համարեցինք բաղձաթիվ բուրժուական աշխատանքային դպրոցի կողմնակից մանկավարժներին (Կերչենչտայներ, Դյուրի և այլն) : Անդամ մեզ մոտ, մեր մասնաշաղկիան դպրոցներից շատերը մինչև 1930 թ. լավագույն դեպքում յեղել են աշխատանքային (վորտեղ այս կամ այն չափով ու ձևով յեղել են արտադրական ու հասարակական աշխատանք), բայց վոչ պոլիտեխնիկական և միայն 1930-31 ուսումնական տարվանից են դրանք սկսել պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցվել :

17-րդ եջում ընկ. Վ. Աստվածատրյանը (դարձյալ բառացի կերպով թարգմանելով Պանկեվիչի «Պոլիտեխնիչեսկայա շկոլա»-յի 184 էջից), գրում է, վոր պոլիտեխնիկական դպրոցը չի կարող հակադրվել աշխատանքի դպրոցին : Այսպիսի ձեվակերպումը նույնպես սխալ է (այստեղ արդեն մեզավոր է Վ. Ասատրըյանի հոգեվոր հայր Պանկեվիչը) . պոլիտեխնիկական դպրոցը չի կարող շատ ուժեղ կերպով չհակադրվել ու չսրայթարել բուրժուական աշխատանքային դպրոցի դեմ :

Բայց պոլիտեխնիկական դպրոցը չի կարող հակադրվել պրոլետարիատի աշխատանքային դպրոցին, վորը պետք է և կարող է միայն պոլիտեխնիկական լինել :

Այս տեսակետից սխալ է անպայման նույն Պանկեվիչը, ըստ վորի «պոլիտեխնիկական դպրոցը, դա խորհրդային աշխատանքային դպրոցի մի յենթատեսակն է» :

## ԴԵ ՇԻՆ, ԾԱՄԾՄԱԾ ՈՊՐՐՏՅՈՒՆԻ ՍՏԱԿԱՆ ՄԻԱԼՆԵՐԸ... ՎՈՐՊԵՍ ՄԱՐԲՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԻՆ ԽՈՍԲ

5) Իր դրբույլի 17-րդ եջում ընկ. Աստվածատրյանը գրում է՝ «Պոլիտեխնիկական դպրոցն ապագայի դպրոցն է. նա ծնունդ է առնում արդյունաբերության դրբության (յերեկ ուղում է ասել «խոշոր արտադրության» դռն է այսպես է ասված Պանկեվիչի գրքի 184-5 էջում, վորտեղից դարձյալ ուղղակի արտադրված են այս սողերը Մ. Ս.) պայմաններում, սակայն աշխատանքի դպրոցը կարող է պրոֆեսիոնալ լինել :

«Պոլիտեխնիկական դպրոցը միտում է սովորողներին մասնագիտական պատրաստություն տալը : Պոլիտեխնիկական դպրոցը հանրակրթական է. նրա նշանակել է մասնագիտացնելը... (ընդհատմաներն իմն են, Մ. Ս.)» : Այն գիրքը (Պանկեվիչի), վորից ընկ. Վ. Աստվածատրյանն արտադրում է այս սողերը և հրբամցնում ընթերցողին, գրված է 1928 թ., ընկ. Վ. Աստվածատրյանն իր գրբույլը գրել է 1930 թ. վերջերին : Այն սխալները (դրանք անպայման սխալ են յենյին և այն ժամանակ), վորոնք դուցե վորոշ չափով յեղել է այն ժամանակ, արդեն միանգամայն արեւելի լինելին այն ժամանակ, արդեն միանգամայն անհասկանալի և անթույլատրելի յեն դառնում մայն անհասկանալի և անթույլատրելի յեն դառնում հասկանալի ժողովրդական կրթության նվիրված 2 խորհրդակցությունից, պոլիտեխնիկական 1-ին համարումարից հետո, մեր մասնաշաղկիան դպրոցի պոլիտեխնիկացիայի ծավալման ներկա չըջանում :

«Պոլիտեխնիկական դպրոցն ապագայի դպրոցն է» ,



տուանց աչք ճպելու կրկնում և Պանկեվիչի յետեվից ընկ. Վ. Աստվածատրյանը. ուրեմն սխալվել և մեր կուսակցութունը, վորը զեռ 1919 թվականին ընդունված կուսակցության ծրագրում գրում և. «անցկացնել ձրի և պարտադիր ընդհանուր և սոցիալիստիկական կրթություն, մինչև 17 տարեկան յերկու սեռի յերեսխաների համար». սխալվել և և ընկ. Լենինը, վոր 1920 թ. գրում և. «անսլայման խնդիր զնել անմիջապես անցնելու սոցիալիստիկական կրթության». սխալվել են և կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը, վորոնք խնդիր են դրել և արդեն իրականացնում են վողջ ժողովրդական կրթության սխառմը սոցիալիստիկական հիմունքներով վերակառուցելու գործը: Ընկ. Վ. Աստվածատրյանը կարծեք թե խնդիր և դրել ժողովրդականացնելու Պանկեվիչի զրքի հատկապես սխալ և անընդունելի մտքերը:

«Պոլիտեխնիկական դպրոցը ժխտում և սովորողներին մասնադիտական կրթություն տալը» դարձյալ Պանկեվիչի յետեվից կրկնում և ընկ. Վ. Աստվածատրյանը: Բավականին հին և ծանոթ յերգ. սոցիալիստիկական և մասնագիտական կրթության անսլայման հակադրման այս տեսության համապատասխան պրակտիկան եր Խ. Ռուսաստանի Լուսթողկոմատի հին ղեկավարության քաղաքականությունը հատկապես 2-րդ աստիճանի 2-րդ կոնցենտրի վերակառուցման գործում, յերբ այդ ըստ եյության ուսուցողական սխուրաստիկ դպրոցները—վորպես վոչ մասնագիտական, (ըստ դրանց, հետեվապես և սոցիալիստիկական) հակադրվում եյին ֆարգործուաներին և տեխնիկոմներին, վորպես մասնագիտական, հետեվապես և վոչ սոցիալիստիկական դպրոցներ:

Գոմոմոնլի և Լուսթողկոմատի միջև այս հին վեճը հայտնի յե բոլորին, հայտնի յե նաև այն լուծումը, վոր տրվեց այդ վեճին կուսակցության և խորհրդային իշխանության կողմից: Այդ խնդրի առթիվ ահա թե ինչ և ասվում Լուսթողկոմատի, կոմսոմոլի Կենտկոմի և Լուսաշխի Կենտկոմի 1928 թ. (վորոչալի մասնագիտացման ուղղությամբ Մ. Ս.)...չի թուլացնում, այլ ընդհակառակն ուժեղացնում և մեր դիրքերը դպրոցի սոցիալիստիկացիայի համար մղվող պայքարում...»:

«Այդ պատճառով 2-րդ աստիճանի սյուֆեսիտնալիզացիայի յենթարկված կոնցենտրը պետք և վերակառուցել տեխնիկոմների, վերացնելով նրանցից նեղ արհեստավորականության և գրենականության տարրերը, բարձրացնելով հանրակրթական գիտելիքները, հասարակական-քաղաքական պատրաստությունը և մտցնելով անհրաժեշտ սոցիալիստիկական գիտելիքներ և ունակություններ, միաժամանակ խնդիր զնելով, վոր այդ տեխնիկոմները տան աշխատանքի վորոչ ընաղափառի համար լրիվ վորակավորում: (Ժող-կրթության նվիրված 2-րդ կուսխորհրդակցության վորոչումնաբերից):

Վոչ միայն այն—ովքեր հետեվում են Խ. Միության բարձրագույն դպրոցների վերակառուցման, նըրանք գիտեն, վոր այդ վերակառուցումը գնում և մի կողմից մասնագիտական խորացման, մյուս կողմից սոցիալիստիկացիայի ուղղությամբ:

«Յերբ խոսում ենք սոցիալիստիկոմի մասին, ըստ ինքյան հասկանում ենք, վոր այդ հիմքի վրա պետք և կառուցվի ժողովրդական կրթության վողջ սխառմը



վերից վար» : (Ընկ. Բուրնովի ճառից, 1-ին համար, համադրումարում) :

Այս բոլորից հետո կրկնել, վոր պոլիտեխնիկական կահավորություն. (դադրյահներ-ուսումնական պալլ, նշանակում և կարգացած դրքի տողերից չտեսնել ու անտեսել թե կուսակցության ու խորհրդային իշխանության վորոշումները և թե այդ վորոշումների արդյունքները կյանքում. նշանակում և կրկնել շատ հին սխալներ, վորոնցից այդ սխալների հեղինակներն անդամ հրատարակել են :

### ՅԵ) ԸՆԿ. Վ. ԱՍՏՎԻՍԱՅՐՅԱՆԸ ՄԱՐԲՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՄԱՆԿԱԼՍՐԺ.ՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԴԱՇՆՈՒՄ

Ձինված «Մարք-լենինյան» այս տեսություններով, ընկ. Վ. Աստվածատրյանը մարտի դաշտ և դուրս դալիս «Ջախջախելու» պոլիտեխնիկացիայի խնդրում Մարքս-լենինյան ուսմունքն ազավաղողներին. առաջինը (և կարծեմ վերջինը), վորը հանգելում է, դա Մ. Սանթրոսյանն է, վորը մի դրքույկում համարձակվել է հայտնել հետևյալ միտքը.

«Իմ կարծիքով ճիշտ չեն այն ընկերները, վորոնք պոլիտեխնիկական բազմակողմանի կրթության խընդիրն անպայման կապում են արտադրության բոլոր կամ բազմաթիվ ճյուղերի ուսումնասիրության հետ հենց դարոցում» (իմիջի այլոց ընկ. Աստվածատրյանը այս ցիտատը շտկել է նրանով, վոր անպայման բառի ընդգծումը և վերջին յերկու բառերը դուրս է ձգել) :

Հասկանալի չե, վոր յես իմ այդ թեկից չեմ հրատարակում վորովհետեւ դա բնական յեղրակացությունն է այն լմբոնման, վորը յես (մարքսիստական մանկաստ

վարժության հետեւելով) ունեմ մասնադիտական և պոլիտեխնիկական կրթության զաղափարների փոխհարաբերության մասին : Այդ հարցը յես իմ ըմբռնածին պես արդեն լուսաբանել եմ «Ժող-լուս»-ի 1930 թ. № 8-ում (տես էջ 21) :

Այդ միտքն է հաստատում Գայոսինովիչի զեկուցման առթիվ ընդունված 1-ին պոլիտեխնիկական համադրումարի բանաձեւը.

«Արդյունաբերության և դյուղանտեսության հետըզհետե ծավալվող ու աճող բազմադան ճյուղերի միջեվ էլ ավելի ու ավելի են յերևան դալիս տեխնոլոգիական, էներգետիկ և կազմակերպչական-արտադրական սկզբունքի միասնությունն ու ներքին փոխադարձ կապը, վորոնք (սկզբունքները), բնորոշում են վոչ միայն արդյունաբերության վորեւէ ճյուղի մասնակի դժերը. այլ և միասնությունն այդ ճյուղերի բազմադանության մեջ» : Այս կետը, վորը Մարքսի հայտնի թեզի կրկնությունն է, իրավունք է տալիս ասելու, վոր պոլիտեխնիկական կրթության համար էյախանը վոչ թե այն է՝ սակավաթիվ (յերբեմն անդամ մեկ) թե բազմաթիվ արտադրության ճյուղերում պետք է աչխատի պոլիտեխնիկապես դաստիարակվողը, այլ այն, թե ինչպիսին է այդ արտադրությունը և ինչպես է դրված այդ արտադրության մեջ կազմակերպված աչխատանքն ու ուսումնասիրությունը :

«Ժող-լուս»-ի № 8-ի իմ հոդվածում բերված ցիտատներին կապելացի էյի միայն մեկը «պոլիտեխնիզմը չի նշանակում բազմարտադրողականություն, նա կարող է կառուցվել արտադրության մի տեսակի վրա, պայմանով, վոր այդ արտադրության դրվածքը նոր-



պրոֆեսիոնալ թեքում չստանա... Պոլիտեխնիկոմը և պրոֆեսիոնալիզմն այժմ միմիանց չեն բացասում ըստ աշխատանքի որակատի, նրանք մեկ-մեկի հակադիր են ըստ մեթոտի»։ (Մոլաժա-վիպ. Պետազոգիչեսկի անալիզ տրուդովիտս սրոոցեսով)։

Յեթե անգամ խնդրին մոտենանք գուտ դործնական տեսակետից, չափազանց վտանգավոր է յուրաքանչյուր կոնկրետ դպրոցի պոլիտեխնիզացիայի իրադործման խնդիրն անսպասման կասել արտադրութայն բոլոր (թեկուզ և գլխավոր) ճյուղերի առկայութայն հետ։ Այդ դեպքում իսկապես, վոր «պոլիտեխնիկական դպրոցը սպաղայի (և այն ել շատ անորոշ և հեռավոր Մ. Ս.) դպրոց» կդառնար։ Իսկ ի՞նչ է ասում Լենինը, վորից առանց քաշվելու ցիտատ և բերում հենց ինքը Վ. Աստվածատրյանը։ «...Վոչ միայն ելեկտրականությունը, այլ և յուրաքանչյուր արակտոր, յուրաքանչյուր դործարան և այն բոլորը, ինչ վոր մեր շրջապատում կապված է տեխնիկայի հետ, ինչ վոր պատկերացում է տալիս նրա մասին, պետք է ոգտադործել անմիջապես»։ Դարձյալ ինքը Վ. Աստվածատրյանը կրուսակայայից բերում է հետևյալ ցիտատը—պոլիտեխնիզացիայի համար մենք պետք է ոգտադործենք ամբողջ մանրամասնությամբ այն բոլորը, ինչ հնարավոր է, կա մեքենա, պետք է ոգտադործել պոլիտեխնիզացիայի համար, տրակտոր կա, արակտորն ոգտադործել... Յուրաքանչյուր յերկաթուծի կայարան պետք է դարձնել յուրահատուկ դպրոց»։ Հենց այս ցիտատները հաստատում են իմ արտահայտած մտքի ճշտությունը, վորի դեմ իբր թե պայքարի յեր դուրս յեկել ընկ. Աստվածատրյանը։

«Պոլիտեխնիկական կրթութայն մասին» սույն բրոշյուրը հանդիսանում է արտատպութայն 1930 և 31 թ. «ժողովրդական տնտեսութայն» ամսագրում լույս տեսած իմ հոդվածների։ Առաջին հոդվածն անցյալ տարի տպագրութայն և հանձնված 1 համամիութենական պոլիտեխնիկական համադրումարից առաջ, հասկանալի չէ, վոր վորոշ դրություններ, դործնական առաջարկներ արդեն հնացած են. սակայն հոդվածների հիմնական սկզբունքային դրույթները հիմա յել յես պաշտպանում եմ։ Դժբախտաբար հոդվածները տպագրութայն սեղանի վրայ առաջ յես վաչ միտայն հնարավորություն չեմ ունեցել կատարելու մի շարք անհրաժեշտ ճշտումներ, այլ անգամ չեն ուղղված ամադրում թույլ տված բաղձաթիվ վրեպակներ, վորոնք ավելի անձաժ վերարտադրվել են բրոշյուրի մեջ։

Սույն բրոշյուրում, վորպես հավելված դետեղված «դպրոցի պոլիտեխնիզացիայի մասին» (նյութեր դեկուցողներ համար) իմ կողմից չի դրված։

Մ. ՍԱՆՔՐՈՍՅԱՆ

(ՍՍՏՐԵՎ ԲԵՐՎՈՒՄ ԵՆ ՆԿԱՏԿՄՅ ՎՐԵՊԱԿՆԵՐԸ)

- Եջ 7. 1-ին տող տպված է. «...քաղաքացին նման չէ դատակարգային, հատկապես բուրժուական հասարակարդի և այլն»։ պետք է կարդալ «տվյալ դեպքում ել...» ունեցող՝ դատակարգային, հատկապես բուրժուական և այլն»։
- Եջ 7. 7-8 տող տպված է...այս կամ այն տվյալ դեպքում...» պետք է կարդալ «տվյալ դեպքում ել...»
- Եջ 8. 5 ներքևից. տպված է «տեմպ», պիտի լինի «տիպ»
- Եջ 9. 1 տող վեր. տպված է «տեմպ», պիտի լինի «տիպ»
- Եջ 9. 7 տող վերևից. տպված է. «Եթե մանուֆակտուրային արտադրութայն մեջ աշխատանքի բաժանումը կատարվում է մեքենաների, հատկապես նրանց բանվորական մասերի ( Рабочая часть ) միջև»։ Պետք է լինի. «Յեթե մանուֆակտուրային արտադրութայն մեջ աշխատանքի բաժանումը կատարվում է անմիջական արտադրողների՝ բանվորների միջև, —մեքենայացրած արդյունաբերութայն մեջ աշխատանքի բաժանումը կատարվում է մեքենաների, հատկապես նրանց բանվորական մասերի ( Рабочая часть ) միջև»։
- Եջ 11. 13 տող. տպված է, «տեխնիկական սոցիալիզացիայի», պետք է լինի «տեխնիկական սոցիալիզացիայի»։



- Եջ 11. 17 տող. տպված է «տեմպը» պիտի լինի «տեպը».
- Եջ 13. 6 տող. տպված է «դառնում» պիտի լինի «դարձնում»
- Եջ 15. 5 տող ներքեվից տպված է պոլիտեխնիզմի պետք է լինի «պոլիտեխնիզմի»
- Եջ 16. 12 տող տպված է «վորը վերացնել» պետք է լինի «վաբը լիովին վերացնել...»
- Եջ 17 3-4 տող ներքեվից, տպված է. «արտադրության համաձայնացումը», պիտի լինի «արտադրության համայնացումը».
- Եջ 18 4-րդ տող. տպված է «արտադասակարգային», պետք է լինի «ասպարասակարգային»:
- Եջ 20 7-րդ տող տպված է. «սովորարար», պիտի լինի «հետեվարար»:
- Եջ 22 1-2 տող. տպված է. «կառուցել է սոցիալիստական հասարակարգը իր պայքարի և այլն» պիտի լինի. «...կառուցել սոցիալիստական հասարակարգը,—իր պայքարի և այլն»:
- Եջ 23 12-րդ տող ներք. տպված է «տնտեսական», պիտի լինի «տեսական».
- Եջ 31. 8 տող տպված է «...քաչվի դեպի» պիտի լինի «քաչվե և դիտի»
- Եջ 31 13 տող տպված է «գործի» պիտի լինի «գործոն».
- Եջ 31 4-րդ տող ներքեվից միանգամայն բառից առաջ պետք է շահերաներ լինեն:
- Եջ 34 13-րդ տող. տպված է «տարրն է» պիտի լինի «տուրքն է».
- Եջ 35. 8-րդ տող տպված է... ուսումնասիրի վոչ միայն արտադրության հետ կապված արտադրողական հարաբերությունները և այլն» պիտի լինի «...ուսումնասիրի վոչ միայն արտադրության հետ կապված բնադիտական տեխնիքական պրոցեսները, այլ և արտադրության հետ կապված արտադրական հարաբերությունները և այլն»:
- Եջ 35 4-րդ տող ներքեվից. տպված է. «կրթության բոլոր գլխավոր ճյուղերին. «ընդհ. դիտական և այլն», պիտի լինի. «կրթության բոլոր ճյուղերին. Բոլոր գլխավոր ճյուղերի «ընդհանուր դիտական և այլն»:
- Եջ 36 10-րդ ներքեվից տպված է «բաղմաշխատություն» պիտի լինի «բաղմարհետություն»:
- Եջ 38. 13-րդ «տեղ դերատեսչական» պիտի լինի «տեղ դերատեսչական».

- Եջ 38 3-րդ ներքեվից «եալ և վոչ...» պիտի լինի «թեկուղ և վոչ...»
- Եջ 38 1-ին ներքեվից «ուսանողական» պիտի լինի «ուսուցողական».
- Եջ 39 6-րդ տող «համաձայնեցում» պիտի լինի «համայնացում»:
- Եջ 39. 11-րդ տող «գյուղատնտեսության միջև...» պիտի լինի «Գյուղատնտեսության և քաղաքի արդյունաբերության միջև».
- Եջ 42. 7-րդ տող ներքեվից «խնդիրները» պիտի լինի «կաղբերը».
- Եջ 60 4-րդ ներքեվից «խորհրդակցությունից» պիտի լինի «կուսխորհրդակցությունից».
- Եջ 69. 6-րդ տողից «Լուսաշխի կենտրոնի 1928 թվին» մինչև պարբերության վերջը պետք է այսպես լինի. «...Լուսաշխի կենտրոնի 1930 թ. ապրիլի 19-ի վերջում մեջ. «2-րդ աստիճանի դպրոցի վերակառուցումը (վերջակի մասնադիտացման ուղղությամբ Մ. Ս.)... չի թուլացնում, այլ ընդհանառակն ուժեղացնում է մեր զեխքերը դպրոցի պոլիտեխնիզացիայի համար մղվող պայքարում»...»
- Եջ 70. 3-րդ տող «Այս բոլորից հետո կրկնել, վոչ պոլիտեխնիկական կահավորության. (Գաղթահաներուսումնական պլանը, «նշանակում է». պիտի լինի «Այս բոլորից հետո կրկնել, վոչ պոլիտեխնիկական դպրոցը ժխտում է մասնադիտական կրթությունն տալը, նշանակում է...»:
- Եջ 71 վերջին տող «նոր» պիտի լինի «նեղ»
- Եջ 72 4-րդ տող «Մուտավիդ» պիտի լինի «Մուտակի»:





« Ազգային գրադարան



NL0229211



46. 025

1976: 25 419. (17, 6)



*Handwritten text, possibly '1976' or similar, written vertically on the left side of the cover.*

М. САНТРОСЯН

**О ПОЛИТЕХНИЧЕСКОМ ОБРАЗОВАНИИ**

Госиздат ССР Армении  
Эривань — 1932